



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԲ. Տարի - ՄԱՅԻՍ 1936



12^{me} Année - Mai 1936



Խմբագրական

Համբարձման տօնը

Ս. Պ.

Հոգ. կեանք

Որով պիտի երթանք

Գա-Տէ

Յայտնութիւն

Վեր. Ա. Օ. Փափազեան

Պաշտամունք

Սամուէլ Պ.

Շնորհաց ծովէն

Իմ ալ վերցուց

Փերուզ Վահանեան

Կենաց ածուներէն

Պողոս եղբայր Պղտիկեան

Զ. Բ. Պուտաբեան

Սերտողութիւն

Կիրակնօրեայ դասերու ներշնչութիւն

Վ. Ս.

Կենսագրական

Ճան Ուէսլի

Ընտանեկան

Քրիստոնեային վկայութիւնը ցնտանիքին մէջ

Թարգ. Բ. Զ. Աբրահամեան

Պատանեաց

Քրիստոնէական վրիժառութիւն

Յ. Բ.

Յուլիտեան

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը մէկու ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք Տշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհասներու համար, այլ ամենուն, բնական Տշմարտութեան
ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ է յարմարութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսածերերը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէշի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո՛չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրտութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՖ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք ԵՒ Արտասահման 25 Ֆրանք

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Ֆրանսայի դրամական առաքումներու համար մեր Compte Chèque Postalն է H. N. Ghazarossian, 182, 53 Marseille

Արթնցի՛ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելն.
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆՔԵՐ



Ուրիշն ա՛լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգիւսոր մանկու խոստումնքէն որ մեզի մեացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի բռնանայ:

Երբ. Ժ. 37

ԺԲ. ՏԱՐԻ

ՄԱՅԻՍ 1936

ԹԻԻ 5



ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԸ

Աստուած մարմնով յայտնուեցաւ... ու
փառքով համբարձաւ: Ա. Տիմ. Գ. 16

Հնուց ի վեր, Աստուծոյ ճշմարիտ եկեղեցին, այլամերթօրէն, բազմաթիւ տօներէն միայն հինգը ճանչցած եւ յարգած է: Ըսել կ'ուզեմ Ծնունդը, Ծաղկազարդը, Չատիկը, Համբարձումը եւ Պենտեկոստէն: Միւս բոլոր դիպուկ օրերը անխտիր, իրենց մէջ աւելի կամ նուազ Հափով օտարամուտ տարրեր կամ ոչ-Սբ. Գրական շունչ ունենալուն համար աղետաբեր նկատուած են:

Առանց մանրամասնելու հոգեւոր մեծ օրերու հանդիսաւոր տօնակատարութեան անհրաժեշտութիւնն ու բազմակողմանի օգտակարութիւնները, ըսեմ միայն թէ իւրաքանչիւր տօն իւրաքանչիւր արժէքը եւ իր արժէքին համեմատութեամբ խանդավառող եւ վերանորոգիչ զօրութիւն ունի: Հետեւաբար, Աստուծոյ եկեղեցին անխուսափելիօրէն պիտի տուժէ ամէն անգամ երբ յիշուած հինգ զլիաւոր տօներէն ունէ մէկը իր արդար վեհութենէն նուազ Հափով գնահատէ:

Դժբաղդաբար, Համբարձումը, որ մեր Փրկչին երկրաւոր կեանքին պսակադրութիւնը կրնայ նկատուիլ, ժամանակէ մը ի վեր, իր իսկական արժէքէն մերկացուած եւ միւս տօներէն ստորագասուած կը տեսնուի: Այս ուղղութեամբ կ'արժէ ակնարկ մը նետել Համբարձման մարգարէութիւնը իր մէջ ամփոփող ԻԴ. Սաղմոսին վրայ: Հոն կը տեսնենք թէ որպիսի՝ հրաքանչ եւ արտասովոր խանդավառութիւն տեղի ունեցաւ երկինքի մէջ, երբ Տէր Յիսուս, «ՓԱՌԱՅ ԹԱՄԱԻՈՐԸ», իր զօրաց բազմութեան հետ յաղթականօրէն յաւիտեանական դռներէն ներս թեւակոխեց:

Ա՛րդ, նախատեսուած վտանգէն խուսափելու համար, կը մնայ Աստուծոյ ժողովուրդին, իւրա-

քանչիւր սուրբ տօն, եւ յատկապէս շեշտուած Համբարձման օրը մեծարել արժանավայել հանդիսաւորութեամբ եւ լուրջ պաշտամունքներով, ի փառս Համբարձեալին եւ ի շահ իր սուրբ գործին:

Այս կարեւոր էր եւ ըսի: Անցնինք խորհրդածութեան:

Ա. Ղուկաս Աւետարանիչը այսպէս կը գրէ Համբարձման շուրջ, «...երբ զանոնք կ'օրհնէր, զատուեցաւ անոնցմէ, ու վեր կ'ելլէր երկինք: Անոնք ալ երկրպագութիւն ընելով Անոր՝ մեծ ու թախութեամբ երուսաղէմ դարձան:»

Այս դէպքէն, ամենէն առաջ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ խորհուրդն է որ տիրականօրէն կ'արտացոլայ: Հօրմէն ելած էր Ան ու նորէն Հօրը գնաց: Հակառակ 40 օրերու ընթացքին Տէրը ըրած երեւումներուն, վերջին վայրկեաններուն մէջ իսկ դեռ, Անոր վերակենդանացման շուրջ «տարակուսողներ» կային կ'ըսէ Մատթէոս (ԻԸ. 17): Եւ Մարկոս կը պատմէ թէ «որոնց որ ինք երեւցաւ մեռելներէն յարութիւն առած՝ իրենք չհաւատացին» (ԺԶ. 14): Խաչեալին գայթակղալից մահը զանոնք ծանր յուսախաբութեան մատնած էր: Հաւատքի կողմանէ նաւաբեկութեան հանդիպած էին անկասկած: Եւ իրենց վսեմ դաւանանքը թէ «Դուն ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին» հիմնապէս խախտած էր: Ի՞նչ միջոցով Տէրը զանոնք վերականգնեց: Ոչ մէկ հրաշք կամ արտաքոյ կարգի նշան, այլ պարզապէս զանոնք օրհնելով վեր ելաւ երկինք: Այսքանը բաւեց: Համբարձման դէպքը իրենց միտքը ծածկող բոլոր կասկածներուն եւ երկրապանքի մէջը փարատեց: Զիրենք անդամալուծող

ամէն վախ ու վարանում անյայտացան: Իրենց հաւատքը ալ երբեք չսասանելու պայմանաւ վերահաստատուեցաւ: Եւ բացուած աչքերով Համբարձեալին մէջ տեսան իրենց Տէրը և Աստուածը:

Այսպէս համբարձման դէպքը մեր Փրկչին բացարձակ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ և բացարձակ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ անբակտելի կնիքը եղաւ:

Այս «վերջին չար ժամանակներուն» մէջ, երբ Աստուծոյ եկեղեցին օրէ օր աւելի ստուար թուով արդիական ասպատակիչներով կը պաշարուի: Երբ աւետարանական «ողջամիտ վարդապետութիւնը» եւ մասնաւորապէս՝ Քրիստոսի կենդանի անձին կապուած փրկարար հաւատքը անխնայ յարձակման կ'ենթարկուի: Երբ մանաւանդ «տաւրակուսողներուն» թիւը ցաւալիօրէն կը բազմանայ, համբարձման պատգամը աւելի քան երբեք այժմէական անհրաժեշտութիւն մը կը դառնայ: Անդիմադրելի դէնք մըն է ան սրով կրնանք հոգիները կործանող «մոլորեցուցիչներու» բանակները խայտառակել եւ ցրուել: Խաբուած, յուսահատած եւ անկեալ հոգիները վերականգնելու համար հզօր լծակ մըն է նոյն պատգամը: Եւ մեզ ու մեր հսկողութեան յանձնուած հոգիները կործանարար ուսմունքներէ պաշտպանելու համար, ընտիր եւ ապահով վահան մը:

Բ. Համբարձման տօնը երկրորդ կենսական պատգամ մը ունի մեզի — ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ խոստումունքը (Յովհ. Ժ. 7): Առանց Տէր Յիսուսի վերացումին ոչ ոք պիտի ճանչնար Աստուածութեան երրորդ Անձը: Աշխարհ պիտի զրկուէր զինք մեղքի համար յանդիմանող Սուրբ Հոգիէն: Մեղքի ահարկաւ գիտակցութեան տակ ճնշուողներ, պիտի չունենային զիրենք զղջումի եւ ապաշխարութեան ճամբով միակ եւ կենդանի Փրկչին առաջնորդող Ճշմարտութեան Հոգին: Առանց Անոր անկարելի պիտի ըլլար «վերստին ծնունդը եւ յաղթական կեանքը»: Աւետարանի քարոզութիւնը պարապ եւ վկայութիւնը անպտուղ պիտի մնար: Առանց Անոր աշխարհ պիտի զրկուէր իր «Լոյսը եւ Աղը» եղող ճշմարիտ եկեղեցիէն և եկեղեցին պիտի զրկուէր իր միակ անսխալ ուղեցոյց Աստուածաշունչէն: Բայց խաչեալ եւ յարուցեալ Քրիստոսը «Աստուծոյ աջ ձեռքով բարձրանալով եւ Հոգւոյն Սրբոյ խոստումունքը Հօր մէն աւնելով տարածեց...» Գործ. Բ. 32, 33): Եւ ահաւասիկ «Չուրերուն վրայ շարժող Աստուծոյ Հոգին» նոր ստեղծագործութիւն մը յառաջ բերաւ: Անոր կենդանաբար շունչին տակ մէկ կողմէն, մեր անգին Աստուածաշունչը կազմող Սուրբ Գիրքերը երեւացին (Բ. Պետ. Ա. 21) եւ

միւս կողմէն «խիստ չորցած ոսկորներ կենդանացան»: Կենդանացան հոգիները վկաներու եւ «վկաներու բազմութիւնը» Աստուծոյ անդիմադրելի բանակին պէս՝ խիստ մեծ զօրք եղաւ (Եզկ. 4: 1-10): Վերէն իջնող Զօրութիւնը, նմանեցաւ «առանց ձեռքի փրցուած քարին» որ կայսրութիւններ խորտակեց և ամբողջ աշխարհը լեցուց:

Ներկայիս, այս երկրորդ ուղղութեամբ ալ համբարձման պատգամը, աւելի քան ոեւէ ժամանակ, իր այժմէութիւնը կը պահէ: Համբարձման տօնակատարութիւնը «Հօրը խոստումունքը» մեզի կը յիշեցնէ: Ուրպէս անհատ հաւատացեալ, եւ հաւաքաբար սրբէս եկեղեցի, որքա՛ն զգալի պէտքը ունինք Աստուծոյ Հոգւոյն նոր այցելութեանը: Պէտք է մը աւելի՝ ստիպողական անհրաժեշտութիւն մըն է մեր ժամանակներուն համար: Առանց վերապահութեան խոստումանինք թէ ներսէն Աստուծոյ սրբարանը ամենաընդլայնեցուցիչ պղծութիւններով եւ Քրիստոսի հարսը ամենատխուր հոգեւոր խխտերով ապականուած եւ անդամալուծուած կ'երեւի: Ժիշդ այս պատճառաւ՝ ոչ միայն խաղաղութիւնը եւ ուրախութիւնը խաւսափած է մեր սահմաններէն, այլ մանաւանդ նախկին զօրութեան եւ յաղթութեան հոգին: Մեր քարոզութիւնները անզօր եւ միւր վկայութիւններն ու ջանքերը ամուլ կը մնան: Իսկ դուրսէն՝ թշնամին ամենանուրբ նենգամտութեամբ եւ կազմակերպեալ կատաղի ուժերով նոր նուաճումներ կ'ընէ: Մեր վիճակը տխուր է, բայց յուսահաւակն չէ, քանի որ Հօրը խոստումունքը ունինք որ իր մէջ Այս և Ամէն է: Եղիսէի պէս կրկնակի հոգիի կը կարօտինք: Հօրը խոստումունքն անմիջապէս տիրանալու համար, երեւակ պայմաններու յօժարելու ենք, ա. խնդրելու ենք Եղիսէի պէս (Ղուկ. ԺԱ. 13), ք. շնազանդելու ենք Եղիսէի պէս (Գործ. Ե. 32), գ. ցարատելու ենք աչքերնիս միայն սեւ միշտ Համբարձեալին վրայ սեւեռելով Եղիսէի պէս (Դ. Թադ. Բ. 1-12): Այն ատեն խոստացեալ Հոգին որ արդէն Պենտեկոստէէն ի վեր իւրաքանչիւր հաւատացեալի մէջ զատ զատ եւ հաւաքաբար եկեղեցիին մէջ կը բնակի, Իր փառաւոր, կրկնապատիկ զօրութիւնը պիտի՛ յայտնէ: Ներսէն՝ բոլոր ախտերը ապառող կրակի պէս, եւ դուրսէն՝ թշնամին բանակները խորտակող ամենայաղթ Զօրութեան պէս պիտի յայտնուի մեր մէջ: Այն ատեն հրեշտակապալ Ստեփանոսի պէս մեր ճակատներուն վրայ պիտի կարգացուի «ՍՐԲՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ»:



ՈՐՈՒ ՊԻՏԻ ԵՐԹԱՆՔ

Տէր, որո՞ւ պիտի երթանք,
Դու՛ն յաւիտենական կեանքի
խօսքեր ունիս:

Յովհ. Զ. 69

Տէր.— Միայն Քեզմէ կրնանք ներկայ եւ թէ
ապագայ կեանքի խոստում ահնկալել: Ինքզինք-
նիս Քեզի յանձնելով ապահով ենք:

Քեզմով յոյսը անշէջ է, հաւատքը՝ բանաւոր,
սէրը՝ օգտակար:

Մտերմութենէդ՝ կ'ոգեւորուինք: Բացակա-
յութիւնդ՝ ապրելու կանոնը անտանելի կ'ընէ:
Աստուծոյ մերձաւորութեան վայելքն ես դուն
խորախորհուրդ յայտնութիւնով: «Էմմանուէլ:
Աստուած մեզի կ'ետ: Աստուած մեր մէջ փառաց
յոյսը»:

Միայն Քու մէջէդ գորութեան հոսանք կը
բղիւի:

Միայն Քու խօսքերդ իշխանութեամբ խօսո-
ղի յարմարութիւն ունին:

Միայն Քեզի «Տէր» ըսելով է որ այս բառը
գերերկրային հանգամանք կ'ստանայ:

Մեր անձերը ամէն բանէ հիասթափութեամբ
բաժնուած՝ անբացատրելի մղումով՝ Քեզմով
գրաւուած են: Յորեկը մեր խորհուրդը, գիշերը՝
մեր մտածումն ու երազը տեսիլքի ներգործու-
թեամբ Քեզմով յափշտակուած են: Մեր էու-
թեանը աճող առանցքն ես այսուհետեւ յաւիտե-
ական:

Դու՛ն Տէր ես, մենք կը հաւատանք ասոր:

Որո՞ւ պիտի երթանք.— Այս հարցումը եւ ա-
նոր շուրջ մեր մտածութիւնը կը շուարեցնէ մեզ: Ո-
ղորմելի ենք, խեղճո՛ւկ:

Այս հարցումով կ'ուզենք զուլթը շարժել: Նոյն
ատեն մեր հաստատ համոզմանը տեղեակ ընել
Քեզ: «Հիմա շատէն քիչը գիտենք», բայց գէթ
ալ հաստատ գիտենք թէ Քեզի գալը իմաստու-
թիւն է եւ Քեզմէ հեռանալը՝ յիմարութիւն:

Ինչո՞ւ «միթէ զո՞ւք ալ կ'ուզէք երթալ» հար-
ցումով կը փորձես խոզովել մեզ, չե՞ս գիտեր թէ
ալ կերպով դժոխքին սարսուռը ունինք առջեւ-
նիս:

Եւ ուրիշ որո՞ւ պիտի երթանք. ամէն բան
հոլորդի ազդեցութիւն կը գործէ մեր վրայ: Ա-
ռանց Քեզի Աստուած իսկ կը մերժէ մեզ. եթէ
Դու՛ն չըլլա՞ս, Անոր տեսքը դժոխքի կրակն իսկ
է, որմէ ուր ալ փախչինք չենք ազատիր:

Գու՛ն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս.—
կ'ուզենք ապրի՛լ: Անմահութիւն կը խնդրենք
Հով. Բ. 7:

Մեռնելու համար ծնունդ տուող Աստուծէ կը
խրաչինք մենք:

Կեանքը պահանջ մըն է, եւ անոր լուծումին
շուրջ մեր գիտութիւնը գոյորշիներու մէջ ծրար-
ուած է: Նպատակաւոր հեռանկարները տեսնելու
համար, թանձր է խաւարնիս:

Բայց Քեզմով Աստուած երկրորդ ստեղծագոր-
ծութեան մը վրայ է: Դու՛ն կեանքի մեր ամենի
պակասը կը լեցնես աւետելով թէ ես եկայ որ
կեանք ունենաք եւ ա՛լ աւելի կեանք: Դու՛ն ան
ես որ ԳԱՂՈՒ ԷԻՐ: Նախորդ ստեղծագործութեան
լոյսը, նիւթը, կեանքը ուրիշ յայտնութիւններ
եւ ձգտումներ կ'առնեն Քեզմով: «Վասնզի Աստ-
ուած որ հրաման ըրաւ խաւարէն լոյս ծագել՝ Ինք
մեր սիրտերուն մէջ ծագեց Աստուծոյ փառաց
գիտութեան լոյսը տալու համար Յիսուս Քրիս-
տոսի անձովը»:

«Ամէն բաները Անկէ ու Անով եւ Անոր հա-
մար են»:

Կը խօսիս, որովհետեւ «ունիս»: «Ունիս»՝ ո-
րովհետեւ կը խօսիս: Բան մը անհնարին չէ Քե-
զի...: «Եւ Աստուած ըսաւ որ ըլլայ... ու եղաւ»:

Առաքելութիւն եւ իշխանութիւն ունիս մեզ
«Աստուծոյ որդիներ» ընելու, «Անոր բնութեանը
հաղորդ», «երկնային կոչումին մասնակից», Քե-
զի «Ժառանգակիցներ», «եղբայրներ»:

Քանի որ խօսեցար՝ պիտի ապրիմ յաւիտեան:
Գովութիւն անուանդ: Ով իմ անձս, օրհնէ Տէրը:
ԳԱ—ՏԷ

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

(ԱՍԻԱՅԻ ԵՕԹԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ)

Երանի՛ ա՛նոր որ կը կարգայ, ու անոնց որ
կը լսեն աս մարգարէութեան խօսքերը եւ կը
պահեն ինչ որ անոր մէջ գրուած է Յայտ. Ա. 3:

Աստուածաշունչի 66 գիրքերուն վերջինը եւ
եկեղեցիին համար ամենաօրհնեալ պատգամով
եւ յուսոյ խոստումներով լեցուն այս գիրքը
գրուած է Պատմոս ըսուած, Փոքր Ասիոյ եղեր-
ներուն շատ մօտ եղող, փոքր կղզիներէն մէկուն
մէջ Յայտ. Ա. 9, 3. Տ. 96 թուականներուն:

Ներոնի վայրագ յաշորդը, Դոմետրիանոս քրիս-
տոնեաներուն դէմ ծանր եւ անտանելի օրէնքներ

հանելով եւ սոսկալի հալածանքներով կ'ուզէր յուսալքել եկեղեցին, նաեւ կ'ուզէր հօտը զրկել իրենց սիրելի եւ արժանաւոր հովիւներէն: Նոյն շրջանին էր որ Յիսուսի սիրելի աշակերտը եւ սիրոյ մեծ առաքեալը Յովհաննէս աքսորուեցաւ յանցաւորներու յատկացուած այս ապառաժուտ ու ամայի կղզին:

Իր երկրային կեանքին վերջին օրերուն մէջ գտնուող եւ յոգնած ծառային կեանքը Տէրը օրհնեց եւ ամէն բաները բարիի գործակից ըրաւ եւ Յովհաննէսի վստահուեցաւ Յայտնութեան օրհնեալ զիրքը գրելու, որով նաեւ կատարուեցաւ Տէր Յիսուսի խօսքը Յովհ. ԻԱ. 22: Յովհաննէս մարգարէական տեսիլքով տեսաւ Յիսուս Քրիստոսի փառաւոր գալուստը, եւ դարերու ընթացքին Աստուծոյ եկեղեցիին անցնելիք վիճակը յայտնող Յիսուսի նամակներուն հաւատարիմ գպիրը եղաւ: Յայտ. Ա. 41:

Նա տեսած էր Հարչարուող Յիսուսը Յովհ. ԺԺ. 26, տեսած էր յարուցեալ Փրկիչը Ա. Յովհ. Ա. 3. նաեւ տեսաւ փառաւորեալ Տէրը Յայտ. Ա. 9, 13-18 եւ վերջին ազօթքով ու օրհնութիւնով խաղաղութեամբ փակեց աչքերը Յայտ. ԻԲ. 20, 21:

Դիրքը զոր կը բանանք, երկար ատեն շատերուն համար զոց մնացած գիրք մըն է: Անուանական եկեղեցին Տէրոջը կամքին հակառակ զայն զոցած, նոյնիսկ անոր ընթերցումը արգիւլած է, մինչ Տէրը երանի կուտայ կարգացողին, լսողին եւ պահողին Գլ. Ա. 3:

Դանիէլի կը պատուիրուի որ գիրքը կնքէ եւ խօսքը զոցէ Դան. ԺԲ. 4: Իսկ Յովհաննէս պատգամ կ'ստանայ որ Յայտնութիւնը բաց մնայ եւ խօսքերը չկնքուին Գլ. ԻԲ. 10:

Երանի՛ անոր մանաւանդ, որ այս օրերուն մէջ երբ Տէրոջը գալուստը այնքան մօտեցած է, կը բանայ այս գիրքը եւ իր խորհրդածութեան նիւթ կ'ընէ զայն ալ աւելի մաքրուելու, սրբանալու եւ Անոր պատուիրանքները կատարելու փափաքովը լեցուն Գլ. ԻԲ. 11-14:

Կար ատեն մը որ այս օրհնեալ զրքին մէջ նկարագրուած կարգ մը դէպքերը կը շուարեցնէին ընթերցողը ու ճշմարիտ եւ ընտիր Ս. Գրոց ուսուցիչներ չէին կրնար սուտանուն գիտութեան քննադատութեանց առջեւ պատասխան մը գտնել եւ աւելի օգտակար կը սեպէին զոցել գիրքը եւ չխօսիլ անոր մասին եւ կամ տալ դժուար ընդունելի մեկնութիւններ:

Գիտութիւնը կը փոխուի, սակայն Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ: Այսօր նոյն գիտութեան փաստերովը կրնանք խօսիլ թէ զրուածը

ճիշդ է եւ մարգարէութիւնը հաստատ Մատթ. Ե. 18:

Երբ Յայտ. ԺԱը կը կարդանք, հոն կը հանդիպինք Աստուծոյ երկու վկաներուն (Մովսէս եւ Եղիա) որոնք կ'սպաննուին զազանիւն կողմէ, որոնց դիերը երեք ու կէս օր կը մնան մեծ քաղաքին հրապարակին մէջ, երկրի վրայ եղողներ կը տեսնեն, կը լսեն, կ'ուրախանան եւ ընծաներ կը զրկեն իրարու. ինչպէս կը քննադատ էին մարդիկ այս դէպքը երբ ռատիօ եւ թէլեվիզիօն (Radio, Télévision) չկար: Ահոնք կ'ըսէին, Երուսաղէմ մէջ եղած դէպքը երեք ու կէս օրէն Հոովմ եւ Փարիզ պիտի լսուի եւ տեսնուի: Իսկ այսօր ոչ թէ կարելիութիւն մըն է, հապա իրականութիւն մը, ոչ թէ երեք ու կէս օր, այլ մի քանի ժամերու մէջ կարելի կ'ըլլայ տեսնել եւ լսել եւ նոյնիսկ ընծաներ զրկել: Օրհնեալ ըլլայ Տէրը, բոլոր աշխարհ սուտ ըլլայ եւ Ինք իրաւ, որ ապագային պատահելիք դէպքերը դարեր ատաջ յայտնած է Իր խօսքովը Դան. Բ. 20-22: Եւ մենք կրնանք տակաւին չհասկցուած եւ մարդոց համար անկարելի երեւցող բաներու հաւատքով վկայ ըլլալ եւ նոյն վստահութեամբ բարձրաձայն աղաղակել թէ Աստուծոյ խօսքը յաւիտեան կը մնայ, ճշմարիտ է եւ անշուշտ պիտի կատարուի: Յայտ. ԻԲ. 6:

Յայտնութեան Բ. եւ Գ. գլուխները կը խօսին եօթը եկեղեցիներու խորհուրդին մասին զոր պիտի սերտենք: Նախ սա հարցը թէ ինչ է եկեղեցի:

Տէրը աշխարհի մարդիկը երեք տարբեր տնուկով կը կանչէ Իր պատգամին մէջ Ա. Կոր. Ժ. 32:

Ա) Հեթանոսներ, որոնց մասին Տէրը կը խօսի միայն այն ատեն երբ Իսրայէլի կամ եկեղեցիի հետ յարաբերութիւն ունի:

Բ) Իսրայէլ: Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը, օրէնքը ընդունած բայց չպահած ըլլալով ատենուան մը համար մերժուած է շնորհքի շրջանին կոյր մնալու դատապարտուած, որմէ վերջ կրկին պիտի ընտրուի եւ Աստուծոյ խոստումներուն Տէրը պիտի ըլլայ Եսայ ԾԱ. 44, ԽԸ. 8-12, ԽԵ. 47: Հով. ԺԱ. 23-32:

Գ) Աստուծոյ եկեղեցին: Եկեղեցին Քրիստոսի մարմինն է, Պենտեկոստէէն սկսեալ մինչեւ Յափշտակութիւնը դարձի գալով աշխարհէ դատուած եւ Յիսուս Քրիստոսի արիւնովը փրկուած եւ Հոգիին սրբացնելովը վերստին ծննդեամբ Աստուծոյ զաւակ եղած սուրբերուն միութիւնն է: Գործ. ԺԵ. 14, Եփես. Ա. 22, 23, Գ. 15-16, Ե. 23, 32:

Հին Կտակարանի տաճարին մէջ կը տեսնենք խորհրդապատկեր մը, ոսկի աշտանակը, իր եօթը ճիւղերովը, որ կը յայտնեն Քրիստոսը եւ եկեղեցին Ձաք. Դ. 2: Ելից ԻԵ. 34-40: Յայտ. Ա. 20: Ոչ թէ զատ զատ եկեղեցիներ, այլ Քրիստոսով միացած մէկ եկեղեցի, որ դարերու ընթացքին տարբեր վիճակներէ անցնելէ վերջ թիւը լեցունած ու կատարեալ անբիծ ու անարատ փառքի կը հասնի եւ Քրիստոսի հետ միացած յաւիտենական թագաւորութիւն կ'անէ Ա. թեա. Դ. 15, 16:

Ահա Տէր Յիսուս Քրիստոսի կողմէն այս եկեղեցիին զրկուած պատգամն է զոր Յովհաննէս առաքեալ Յայտնութեան երկու պոլսներուն մէջ կ'արձանագրէ: Այս ոչ թէ տեղական եկեղեցիի մը եւ ժամանակաւոր պատգամ մը, հապա՜՜նորհաց դարերու ընթացքին ապրող հաւատացեալներու համար մարգարէութեամբ տրուած պատգամ մըն է Յայտ. Բ. 7, 11, 16, 29, Գ. 6, 13, 22:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Օրհնեցէ՛ք Տէրը ով Անոր բոլոր գործերը,
Անոր Տէրութեանը ամէն տեղերուն մէջ,
Օրհնէ Տէրը ով իմ անձս: Սաղ. ՃԳ. 22

Մայիսի քընքոյշ յոյգերով շաղուած մուկ լազուրին տակ՝
Դաշտերը բուրվառ, ծաղիկները խունկ, ասողերը կըրակ.
Տիեզերքն անհուն՝ տաճար, որուն մէջ քամին խընկարկու
Կ'օրօրէ բուրվառն: Ու թուխ ամպձըրար մըշուշն անարկու՝
Կ'իջնէ, կը ծածկէ, ծագէ մինչեւ ծագ տաճարը անհուն:
Ու խորհրդաւոր, լուռ խընկարկուսի՝ այդ վըսեմ պահուն,
Երկնաբերձ ծառերն վանահայրերու մեղանուշ թօնով՝
Բընութեան էջ-բաց գրքէն Սաղմոսներ կ'երգեն անխրոով:
Եւ կոտրած սըրտով ուխտաւորներու պէս լո՛ւռ, ծընկաչոք,
Լեռներն՝ կողք կողքի, սուսիկ, գըլխիկոր կ'աղօթեն մըտօք...

— Ու երբ ցայգալոյսն կը վարդերանգէ միջոցն այգօծուն՝
Յայնժամ ժամասաց տիրացուներու պէս հոգեցրնծուն
Հողմերն՝ խմբերգու թրուշուններուն հետ համաներդաշնակ,
Կ'օրհներգեն հըզօր Արարչին վըսեմ փառքը անպարփակ...

*
* *

Օ՛հ, անպարագիծ այս խորախորհուրդ պաշտամունքին մէջ՝
Հոգիս հըրդեհուած պաշտումի խորունկ մարմաչով մ'անշէջ,
Կ'իյնայ ծունկ-կըթոտ պըզտիկ տըղու պէս երեսի վըրայ,
Եւ օրհներգութեան տեղ լո՛ւռ կը փըղձկի, կուլա՛յ, կը խոկա՛յ...

ՍԱՄՈՒՆԷՆ Պ.

Աստուածաշունչը կը գոցուի Յայտնութիւնով:
Նա վերջաւորութիւնն է Ծննդոցով սկսող մարդ-
կային պատմութեան. կ'սկսի նոր երկինք մը
ու նոր երկիր մը, եւ ամէն բաները նոր կ'ըլ-
լան Յայտ. ԻԱ. 1, 5: Ինկած մարդը Քրիստոսով
բարձրանալով՝ կը հասնի կատարելութեան եւ
փառքի. իսկ մեղաց եւ ապստամբութեան մէջ
մնալու յօժարող մարդը յաւիտենական կորուս-
տի եւ դատապարտութեան: Հնազանդութեամբ
եւ հաւատքով դրախտը կը բացուի մարդուն
առջեւ եւ սուրբեր կը ժառանգեն զայն ու կը
տիրանան յաւիտենական ենջանկութեան: Նզով-
քը կը վերջանայ, աչքերէն արցունքներ կը
սըրուին եւ առաջուան բաները կ'անցնին Յայտ.
ԻԲ. 1-5:

Մեղաւորին եւ ապստամբին պատմութիւնն
այ կը վերջանայ հոն Աստուծոյ երեսէն վոնտուե-
լով Սատանային եւ իր հրեշաւկներուն հետ յա-

ւիտենա՜ս գեհենի դատա-
պարտութեան սարսափելի
վճիռովը, ուր պիտի ըլլայ
լալ եւ ահուաներ կըճտել
Մատթ. ԻԵ. 41, Յայտ. Ի.
14, 15:

Ահա այս ատեն Աստու-
ծոյ աթոռին շուրջ պիտի
լսուին փառաբանութեան
ալէլուիաներ յաւիտենից
մարթուած Գառն, հրեշ-
տակաց խմբերգին խառ-
նուած օրհնութեան ձայներ
երկինքը պիտի ուրախաց-
նեն Յայտ. Ե. 8-14, ԺԹ. 4-9.
Իսկ գեհենի սարսափներուն
մէջ դատապարտուածնե-
րուն լացն ու ահուաներու
կըճտումը, դեւերու ծաղրին
ու վայնասիւնին խառնուած
իրենց ծնած օրը անիծող
դատապարտեալ հոգիներու
հայհոյութեանց եւ անէձքի
ձայներուն հետ դժոխքը
պիտի լեցնեն Յայտ. ԺԹ.
20, Ի. 9: 10, 15: Տէրը պա-
հէ քեզ այս սոսկալի վախ-
ճանէն Եզեկ. ԼԳ. 11, Բ.
Պետ. Գ. 6, 7, 9: Եթէ
փրկուած հաւատացեալ մըն
ես, Տէրը Իր Հոգիովը ար-
թընցնէ քեզ որպէսզի կոր-

ԻՄՍ ԱԼ ՎԵՐՑՈՒՅ



Ան որ Որդւոյն կը հաւատայ, յաւիտեանական կեանք ունի. եւ ան որ Որդւոյն չհնազանդիր, անիկա կեանք պիտի չտեսնէ, հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ: Յովհ. Գ. 36

Ծնած եմ Խարբերդի Բերդակ գիւղը բազմաճաւառ ընտանեկան յարկի մը մէջ: Ծննդեանս թուականը անորոշ է, անորոշ է նաեւ վերստին ծննդեանս օրը, միայն 1905 տարին կը յիշեմ, բայց զիտեմ թէ Տէրը իմ մէջս փոփոխութիւն մը ըրաւ այն ատեն եւ իր մեծ շնորհաց արեգակը իմ վրաս ալ ծագեցուց: Մեր քարոզիչը Պր. Միքայէլ Աստուծոյ մէկ զաւակն ըլլալով շատ յատակ կերպով կը ներկայացնէր թէ մեզի բողոքականներուս ալ պէտք է նորէն ծնանիլ, քանզի աւետարանականութեան միայն անունը փրկութիւնը չէր երաշխաւորեր: Այդ Աստուծոյ մարդուն միջոցաւ վերջապէս ես ճանչցայ թէ մեղաւոր մըն եմ եւ փրկութեան համար պէտք է որ ընդունիմ Քրիստոսը որ զիս փնտռեց եւ գտնելու համար աշխարհ եկաւ:

Քարոզիչը ներկայացուց մեզի Աստուծոյ մորթումը Գառնուկը որ արիւնը թափելով, այ-

.....

սուած հոգիներու աղեխարշ կոծը այսօր իսկ զգալով անոնց փրկութեան համար կարելին ընես, որպէսզի քեզի շատ սիրելի եղողներ չերթան հոն ուր աղօթք չկայ եւ Փրկիչ չկայ, ուր Սատանան միայն կը տիրէ եւ յաւիտեանական կրակը կը տանջէ Ղուկ. ԺԶ. 28:

Կ'անցնի լոյս ցորեկն, ո՛հ, կուգայ մութ գիշեր, Պատեհութիւնդ է թերեւս վերջին.
Յայնժամ ողբ, աղերս այլեւս ինք չի լսեր,
Այժմ անսա, ո՛հ անսա Իւր կոչին:

Մահ կայ մութին մէջ, մութ գիշերն անվերջ,
Վըճիռն անփոփոխ, հուրն անշէջ.

Ահեղ այս վիճակն ո՛հ, կ'ըլլայ քեզ բաժին
Երբ անփոյթ կ'ըլլաս Իւր հրաւերին:

Մ. Ի. 375

Վեր. Ա. Օ. ՓԱՓԱՋԵԱՆ

Փօնտ Օպէնատ

սինքն իր կեանքը մեզի տալով փրկութիւն տուաւ:

Ես տեսայ զԱյն իմ հոգիիս աչքովը, տեսայ կախուած ալն անիծեալ փայտէն, բայց տեսայ որ Անոր Հարչարուող երեւոյթէն քաղցր ժպիտ մը կը շողար առ ինձ որպէս յայտնութիւն մը Աստուծոյ սիրող սրտին եւ որուն մէջ ես ներքնապէս լսեցի յատակ կերպով ինծի եկած խօսքը, «Որդեակ իմ, քու մեղքերդ քեզի ներուած են»: Գառնուկը աշխարհի հետ իմ ալ մեղքերս վերցուցած էր:

Այն օրուէն ի վեր երբ իմ փրկութեանս վատահոլութիւնը վայելեցի, Տէրը ինձ քալել սկսայ, ամէն օր սորվելով եւ Անոր սուրբ խօսքով մխիթարուելով: Տէրը զարմանալի բաներ ըրաւ իմ վրայ, զորոնք զրելով չեմ կրնար ներկայացնել, ոչ ալ բերնով պատմել:

Ինչպէս Աստուծոյ շատ մը ուրիշ զաւակներունը, նոյնպէս իմ կեանքս ալ շատ ցաւերով եւ փորձութիւններով երանգուած է մանկութենէս ի վեր: Արդէն Աստուծոյ զաւակները իրենց փրկութեան օրէն սկսեալ Սատանայի կենդանի նշանատախտակն են: Այսու ամենայնիւ իւրաքանչիւր փորձութեան Տէրը բարեհաճեցաւ ինծի համար գործել եւ զիս միշտ նոր զօրութեամբ ոգեւորել զիմադրելու եւ նաեւ մխիթարուելու:

«Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենաք, բայց քաջասիրտ եղէք, եւ աշխարհի յաղթեցի» յայտարարութիւնը անհուն զօրութեան եւ յաղթութեան աղբիւր մը եղած է ինծի համար:

Եկան պարագաներ, որոնց մէջ նիւթական հարստութիւններէ զրկուած՝ անձուկ վիճակներէ անցայ, կորսնցուցի ամէն բան, բայց Ինք ինծի հետ մնաց, իմ մէջս մնաց եւ ես Անով շարունակեցի կեանքը, փառք Իրեն, ապա թէ ոչ առանց Իրեն կարելի չէր ապրիլ:

Գիտեմ որ շատ անգամներ Տէրը զգալի կերպով աղօթքներուս անմիջապէս պատասխանած է:

Կը յիշեմ որ Խարբերդէն փախած Հայաստան կը գտնուէինք. հոն սովի ժամանակ իրիկուն մը բնաւ բան մը չունէինք ուտելու եւ քրոջս ու պզտիկ եղբորս հետ ստիպուած էինք պատրաստուիլ անօթի անկողին երթալու համար, բայց Տէրը մեր աղօթքէն յետոյ այդ նեղութիւնը փարատեց: Յանկարծ դուռը բացուեցաւ եւ մեզի օգնութեան եկաւ Տէրը Եղիայի ազուաներուն բերած օգնութեան նման, մեզի ալ ատենին բերաւ, քանզի ես ինձմէ աւելի իմ եղբորս վրայ կը խորհէի:

Ուրիշ փորձութեանց մէջ ալ զայս սորվեցայ

թէ այս աշխարհի չարչարանքները բան մը չեն գալու փառքին քով որ մեզի պիտի յայտնուի:

Այս հեռանկարը, այս յոյսը ինծի միշտ ներքին ուրախութիւն մը տուած է եւ Տէրոջը ծանր դպրոցին մէջ սորվեցայ նաեւ համբերութիւն: Ուրիշներ կ'ընկրկէին ըսելով, «Մեր թշնամին շատ զօրաւոր է, փորձութիւնը մեծ է, անիկա մեզի կը յաղթէ, Աստուած թող տալ մեզի յաղթութիւնը, եթէ կ'ուզէ որ յաղթենք»: Բայց կ'երեւայ որ անոնք այդ յաղթութիւնը Տէրոջմէ չեն ատնիր, հապա իրենք իրենցմէ կ'ուզեն յաղթել: այդ բանը ես շատ փորձելէ յետոյ ձգած եմ, քանզի տեսայ թէ ճշմարիտ համբերութիւնը, յաղթութեան գաղտնիքը Քրիստոսի մէջ մնալուն մէջ կը կայանայ: Անոնք զեռ չեն հասկնար այդ գաղտնիքը որ Տէրոջը գաւազնակներուն միայն տրուած է եւ երբ Յիսուսի օրինակը բերենք իրենց, անմիջապէս կ'առարկեն թէ Յիսուս Աստուած էր, մենք հոգեղէն ենք: Փառք ըլլայ սակայն որ Տէրոջը շատ գաւազնակներ՝ Ստեփանոս, Պօղոս, Յովհաննէս, Պետրոս եւ ուրիշ շատ մը գաւազնակներ մինչեւ այս օրս Քրիստոսի մէջ ըլլալով յաղթութիւնը տարած եղան:

Սորվեցայ նաեւ թէ Աստուծոյ խօսքը առանց խարդախելու մեր նմաններուն բերելու ենք եւ անոր ճշմարտութիւն ու իրական ըլլալը մեր անձնական կեանքով հաստատելու ենք:

Ժամանակի ընթացքին Տէրը շատ բաներ սորվեցուց, իւրատեց բայց զիս մահուան չյանձնեց: Սորվեցայ նաեւ Սուրբ Հոգիին առաջնորդութեան վստահիլ, նոյնիսկ եթէ այսօր չեմ ալ գիտեր թէ ուր կ'առաջնորդէ ինծի:

Տասնըեւեք տարիներէ ի վեր Մ'արսէյլ կը գտնուիմ: Սկիզբէն բնաւ Աստուծոյ խօսքը քարոզող մը չկար հոս: «Քէմփ Օտտոյ»-ի մէջ կը գտնուէի, երբ օր մը Տիկ. Աննակիւլ Գազանճեան հոն եկաւ եւ ըսաւ որ քանի մը հոգիներով քաղաքիս Հօթէլ Նանթին մէջ ժողով մը պիտի ունենային եւ զիս ալ կը հրաւիրէին: Դացի քանի մը անգամ, բայց քիչ յետոյ քաղաքէն աւելի հեռանալով Ս. Անթուան գացինք, որով քաղաք իջնել աւելի դժուար եղաւ ինծի եւ ժողովներն ալ դադրեցան անոնց մեկնելովը: Բայց փառք ըլլայ որ Տէրը իմ քովս էր եւ ասեմ մը յետոյ զիս շատ անգամ ալ կը համոզէր որ անկարելի բաները կարելի ընելով երբեմն երթամ այն ժողովներուն, որոնք կանոնաւորապէս սկսած էին քաղաքին կեդրոնը մեր հովիւին միջոցաւ: Զորի վտակներուն փափաքող միեղջերուին նման ես ալ այնպէս ծաբաւած Աստուծոյ գաւազնակներուն

միաբանութեանը, կը խմէի Աստուծոյ խօսքէն եւ կը զօրանայի:

Օրին մէկը երբ մեր սիրելի հովիւը մեր կողմերը կը գտնուէր, մայրս եւ ես ներկայացուցինք հոգեւոր ժողովի մը պէսքը այս արուարձանին մէջ, բայց նա ուրախութեամբ ըսաւ որ քիչ մը աւելի հեռու տեղ մը արդէն սկսած էին ժողով մը եւ թէ արդէն Կիւլշան եղբայրը այդ ժողովներուն կ'առաջնորդէր:

Տէրը օրհնեալ ըլլայ որ ատոնց մէջ շատ մեծ օրհնութիւններ վայելեցինք, օրհնուեցանք ու մխիթարուեցանք ու կրցանք նաեւ ուրիշներուն ալ օրհնութիւն ու մխիթարութիւն ըլլալ: Անոր անուանը փառք ըլլայ իր հոգածութեանը համար, չէինք խորհեր թէ այս բանն ալ կարելի պիտի ըլլար, բայց կարելի եղած է եւ այժմ մենք շարթուան մէջ երկու գանազան տեղերու մէջ Տէրոջը խօսքին առատութեանը մէջ կը սնանինք:

Տէրոջը փառքին համար խոնարհաբար կ'ուզեմ վկայել թէ նա իմ արտիս մէջ մեծ սէր մը դրած է հոգիներու փրկութեան համար որ աղօթեմ անոնց համար եւ ձեռքէս եկած վկայութիւնն ալ տամ անոնց: Այս բանը իմ մէջս Տէրոջ հանդէպ ունեցած սէրս աւելի կը խորացնէ. եւ Պօղոսի փորձառութիւնը իմ ալ կ'ըլլայ ըսելու, «Ով պիտի գատէ զիս Քրիստոսի սէրէն»:

Եւ իմ փափաքս է որ որքան Տէրը ինծի կեանք պարգեւէ այս աշխարհի վրայ, զանիկա անցնեմ Տէր Յիսուսի համար պղտիկ լոյս մը ըլլալով իմ անկիւնիս մէջ:

Տէր Յիսուսի փառք ըլլայ այս անպատմելի պարգեւին համար:

Այս տողերը գրեցի, ա. կեանքիս կարճաօտ մի վկայութիւնը տալու եւ Տէրոջը գործերը պատմելու իմ ոչինչիս եւ ցածագգիւս վրայ, վասնզի իմ կողմէս պարծենալու մէկ բան մըն ալ չունիմ եւ ինչ որ եմ Տէրոջը շնորհքովս եմ: Բ. Ճանչցնելու ինքզինքս «Բանքեր»-ի մեծ ընտանիքին, որուն մէկ անդամն եմ սկիբզէն ի վեր եւ խնդրելու բոլոր եղբայրներէս եւ քոյրերէս որպէսզի ինծի համար աղօթեն:

Ձեր քոյրը աղօթքով
ՓԵՐՈՒՋ Մ. ՎԱՀԱՆԵԱՆ

Ս. Անթուան
Մ'արսէյլ

«Մեր մէջ» տկար եղողը այն օրը դաւիթի տանը պէս պիտի ըլլայ եւ դաւիթի տունը Աստուծոյ պէս, Տէրոջը հրեշտակին պէս պիտի ըլլայ»:

Գ. Համբարձման դէպքին սերտօրէն կապուած է նաեւ երրորդ պատգամ մը — Տէր Յիսուսի երկրորդ գալստեան խոստումը: Փրկչին վերացման պահուն երկու հրեշտակներ ծանուցին աշակերտաց բազմութեան թէ «Այս ցիւրկերը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ, ինչպէս տեսաք Անոր երկինք երթալը»: Եւ ահա այս երկնառաք պատգամը դարձաւ անոնց «Երջանիկ Յոյսը»: Իր կարգին այս Յոյսը՝ դարձաւ մշտնոս աղբիւրը Զօրութեան, Սրբութեան, Պաշտօնութեան: Անով՝ անոնք տոկացին ցեղակիցներու ծանր թշնամանքներուն եւ հեթանոսական բարբարոսութիւններուն (Հոով. Ը. 18): Այս յոյսէն մղուած «օտարներու եւ պանդուխտներու» կամ երկնային քաղաքացիներու պէս «մարմինի ու հոգիի ամէն կերպ պղծութիւններէ հրաժարեցան եւ սրբութիւնը կատարելագործեցին Աստուծոյ վախովը» (Տիտ. Բ. 12), եւ դարձեալ նոյն Յոյսէն խթանուած (Յայտ. ԻԲ. 12) ծառայութեան լծուեցան: Բայց ի՞նչ ծառայութիւն (Հոով. ԺԲ. 11): Քիչ ժամանակէն «բոլոր աշխարհը Աւետարանով լեցուցին»: Եւ ահա առիկ հրէական, յունական եւ հռովմէական խոստանալով ազդեցութեան տակ ամլացած «Աստուծոյ Այգին» աննախընթաց պաշտօնները ինքն մը ցոյց տուաւ:

Նոյն տօնը, նոյն պատգամը աւելի հզօր շեշտերով կը հնչեցնէ մեզի՝ «որոնց դարերուն վերջը հասաւ»: Մենք աննախընթաց օրերու մէջ կ'ապրինք: Պատմութիւնը չունի էջ մը որ մեր ժամանակներուն ահարկու վիճակին նմանի: Ոչ միայն ազգերը, այլ նաեւ ամէն մարդ, մասնաւորապէս եկեղեցին եւ իւրաքանչիւր անհատ հաւատացեալ ստիպողաբար «բոլորեալ կրակէ եւ խորունկ ջուրերէ» պիտի անցնի: Արդ, կարեւոր է գիտնալ թէ աշխարհէ մերժուած Քրիստոսի Հարսին համար ո՞րն է Զօրութեան այն աղբիւրը, որով կարենալ յաղթական, անքիծ եւ կենսունակ մնալ մինչեւ որ Փեսան գայ: Կը կրկնենք թէ Զօրութեան աղբիւրը Տէր Յիսուսի երկրորդ գալստեան յոյսն է:

Այս յուսով ընտրեալները նեղութեան պիտի տոկան (Յակ. Ե. 8): Այս յուսով ընտրեալները «ինքզինքնին պիտի սրբեն» (Ա. Յովհ. Գ. 2): Այս յուսով ընտրեալները յարաճուն կենսունակութեամբ պիտի պաշտօնաւորին (Ղուկ. ԺԺ. 13):

Համբարձման երրորդ պատգամը այս է, — «ԱՀԱ ՓԵՍԱՆ ԿՈՒԴԱՅ»:



ՊՕՂՈՍ ԵՂԻԱՅԻ ՊԶՏԻԿԵԱՆ

Հանգուցեալը (Եօզկատցի) յետ կարճատեւ և ցաւազին հիւանդութեան, վերջերս կանչուեցաւ «Տէրոջը հետ ըլլալու» իր 60րդ տարիքին մէջ: Իր բաժանումը միշտ զգալի կը մնայ ինչպէս իր սիրելիներուն, նոյնպէս ալ Փարիզի Հայ Աւետարանական եկեղեցիին որ իրմով կորսնցուց շատ սիրելի անդամ մը և բարեբնոյթ եղբայր մը:

Մեծ պաշտօններ չվարեց նա, բայց մեծ էր եկեղեցիին մէջ իր հեզութեամբ, եկեղեցասիրութեամբ եւ անյաղթ հաւատարմութեամբ: Իր լոկի, լուրջ հոգեւորութիւնը, իր ստանձնած ջանքերն ու ազօրքները լաւագոյն ու բարեբար ազդեցութիւններ թողուցին իր բազմամարդ ընտանիքին անդամներուն վրայ, որոնք անտարակոյս յար օգտուեցան ծերունի սուրբին վարքէն ու վկայութենէն:

Պօղոս եղբայր նաեւ տառապանքի դպրոցին մէջ կրթուած հաւատացեալ մըն էր: Տաժանելի հիւանդութիւններ ու անողորմ մահը քանիցս հարուածեցին իր ընտանեկան յարկը, տրտմեցնելով ու արիւնքելով իր սիրտը: Սակայն նա եթէ լացաւ, շնորհք ընդունեց բոլոր մխիթարութեանց Աստուծմէն եւ սորվեցաւ տառապանքի մէջ տեսնել «Հօրը խրատը»: Հաւատքով եւ հնազանդութեամբ Հօրը սրբութեան հաղորդ եղաւ: Զարմանալի էր տեսնել իր համբերութիւնը եւ քաղցրութիւնը փոխան ապստամբութեան կամ յուսալքման: Բոլորս իր մէջ ճանչցանք Գառնուկին հետեւորդը որ Անոր հետեւէն կ'երթայ ուր որ Ան կ'երթայ:

Վերջին օրերը վկայութեան օրեր եղան: Երբեմն բժշկութեան յոյսին, օրերը սակայն մերձեցող յաւիտեանականութեան հանդէպ միշտ անզորր եւ Աստուծոյ փառքին յուսալու օրեր եղան: Մինչեւ որ Բարի Հովիւը հկաւ, Իրենը տուն տանելով...:

Անկասկած հիմա իր Փրկչին մէկ ժպիտը անհամար դարերու փառքի պէս է իրեն համար, իսկ իր մխիթարեալ սիրելիներուն եւ բոլոր զինքը վաղեմիներուն մէջ իր յիշատակը կը յամենայ անոյշ երգի մը նման:

Զ. Բ. ՊՈՒՏԱԲԵԱՆ



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԵՐՈՒ

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

ՄԱՅԻՍ 3.—

«ԻՆԾՄԼ՝ ՍՈՐՎԵՅԻՔ» ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԻՒՆ,
ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Դաս Ղուկ. ԺԷ. 1-19

Կարգալ ՓԻ. Բ. 1-11

1. Ներդաստնութիւն (հ. 1-6): Տէր Յիսուս ին-
ծի եւ քեզի կը սորվեցնէ այս դասով հոգեւոր
կեանքի կենսական պայմանները: Հաւատաց-
եալի մը համար՝ աւելի դիւրին է անապաշխա-
րի մը ներքի՝ քան թէ ուրիշ հաւատացեալ եղ-
բոր մը: Հաւանաբար հոս յիշուած «պատիկները»
կը ցուցնեն նաեւ հաւատքի հօտին մէջ տը-
կար եղողները (Ա. Կոր. Ը. 11, 12, Թ. 29) «Քրիս-
տոս ալ ոչ թէ Իր անձին հաճոյ եղաւ» (Հռովմ.
ԺԵ. 3): Այս է մեզի համար Քրիստոսի միտ-
քը ունենալ (Փիլ. Բ. 1-11, Ա. Կոր. Ը. 9, 13,
Հռով. ԺԴ. 13, 21): Մեր աններող հոգին ամենէն
մեծ գալթակողութեան քարը կրնայ ըլլալ ուրիշ
եղբայրներու:

Առաքեալները այս կէտին մէջ ինքզինքնին
այնքան պակաս կը գտնեն՝ որ կ'աղօթեն ըսելով,
«Մեր հաւատքը աւելցուր»:

2. Խոնարհութիւն: Հոս մանաւանդ խոնարհ
ծառայութիւն: (Ա. Կոր. ԺԵ. 10, Եփես. Գ. 8, Ա.
Տիմ. Ա. 12-14, Բ. Տիմ. Ա. 9): «...զայն որ պար-
տական էինք ընելու՝ ըրինք»: Աւա՛ղ, մեզմէ շա-
տեր այսչափն ալ չենք կրնար ըսել՝ հապա ստիպ-
ուած ենք խոստովանիլ թէ «նոյնիսկ զայն որ
պարտական էինք ընելու՝ չըրինք»:

3. Երախտագիտութիւն: Երախտագիտութիւնը
հաւատացեալին կեանքին մէջ ամենէն կենսա-
կան բանն է, իսկ ապերախտութիւնը ամենէն
շատ տկարացնող ու չորցնող ախտն է: Եւ Յի-
սուս այս խիստ կարեւոր դասը սորվեցնելու հա-
մար կ'ընտրէ հիւանդութիւն մը որ ամենէն անար-
կու ախտն է մարմնին համար՝ քանզի բորբոսու-
թիւնը գարշելի է, ապականող, ամբողջ մարմնին
կամաց կամաց տարածուող, փոխանցիկ, բաժնող,
անբուժելի եւ անխուսափելիօրէն մահուան ա-
ռաջնորդող: Ինչ որ է բորբոսութիւնը մարմնին՝
նոյնն է մեղքը հոգիին:

Փրկուած հոգի մը պէտք է ապրի տեւական
փառաբանութեան կեանքը, վասնզի անարկու է-
ին այն մեղքերը որոնցմէ Տէր Յիսուս Քեզ փր-
կեց (Յոր. ԺԵ. 16, Եփես. Բ. 1-3 եւն.): Մեծ էր
այն փրկագինը զոր Նա վճարեց (Սաղ. ԽԹ. 7, 8,
Ա. Պետ. Ա. 18, 19 եւն.), եւ բարձրաձայն պէտք
է ըլլայ մեր փառաբանութեան կեանքը, (Ա.
Մնաց. ԺԶ. 27-29, Սաղ. ԻԹ. 4, 2, Լ. 4, 11, 12, ԼԵ.
18, ԴԲ. 1-4, ԴԶ. ՃԵ. 1-3, ՃԶ. 1, 2, ՃԺԹ. 62, 164,
Դան. 2. 10, Փիլ. Դ. 4-7, Եբր. ԺԳ. 13, Ա. Պետ.
Բ. 19 եւն.):

ՄԱՅԻՍ 10.—

«ՇԱՏ ԱԶԴՈՒՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՕԹՔ»

Դաս Ղուկ. ԺԸ. 1-14

Կարգալ Ա. Յովհ. Գ. 18-24:

Երեք տեսակ աղօթքներ կան հոս եւ երեք
տարբեր նիւթերու վրայ: Անխրաւ դատաւորին ե
որբեւարին առակով Յիսուս կը պատասխանէ
Ղուկ. ԺԷ. 20ի փարիսեցւոց ըրած հարցման՝
խօսքը Իր աշակերտներուն դարձուցած ըլլալով
(հ. 22) քանզի Ղուկ. ԺԸ. 1-8, Ղուկ. ԺԷ. 20-37ի
եզրակացութիւնն է «Ուրդին մարդոյ երբ զայ»
(ԺԸ. 8):

Աստուծոյ ընտրեալները պարտին աղօթք ը-
նել «ամէն ատեն ու չձանձրանալ»: Աղօթքի մէջ
յարատելութիւնը նոյնչափ կարեւոր է՝ որքան
հաւատքը: Ընտրեալներուն «Ամէն, եկուր Տէր
Յիսուս» աղօթքը պէտք է ըլլայ «ցորեկ ու գի-
շեր» (հ. 7): Հաւատքը կը նորոգուի աղօթքի մէջ
արթուն կենալով:

Փարիսեցիին եւ մաքսաւորին առակին մէջ
կարելի է ըսել թէ իրականին մէջ ճշմարտապէս
մէկ աղօթող կար, այսինքն մաքսաւորը. քանզի
աղօթքը Աստուծոյ կ'ուղղուի՝ մինչդեռ փարիսե-
ցին ինքն իր անձին ուղղած էր իր աղօթքը:

Մաքսաւորին աղօթքը ապաշխարութեան ա-
ղօթքն է: Նա կ'աղօթէր ամչնալով (Եզրա. Թ. 6)
իր անձը արհամարհելով (Յոր. ԽԲ. 6), կոտորած
ու խոնարհ սրտով (Սաղմ. ԾԱ. 17), Աստուծոյ
սրբութեան առջեւ իր կորսուած ըլլալու գիտակ-
ցութեամբ (Եսա. 2. 5), նա իր կուրծքը կը ծե-
ծեր (Երեմ. ԼԱ. 18, 19), նա կ'աղօթէր նեղու-
թեամբ (Ղուկ. ԻԳ. 48):

Եւ շատ բնական է որ այսպիսի աղօթք մը կը
պատասխանուի եւ այսպիսի ապաշխարող մը
Աստուծոյ կողմէ կ'արդարացուի: «Պէտք է ըսել
թէ՝ թէեւ մաքսաւորը մեղքի զոհ մը չէր բերած,
բայց արիւնի միջամտութիւնը լոկեալն

կը հասկցուի, քանզի այս մաքսաւորը ամէն ուրիշ հրէայի նման գիտէր թէ Աստուծոյ ողորմութիւնը մեղաւորին հանդէպ միայն արիւնով կ'ըլլար՝ քանզի «արիւն չթափուած թողութիւն չըլլար» (Ղեւտ. ԺԷ. 41, Եբբ. Թ. 22) (հետեւողութեամբ Սքաֆիլտի):

ՄԱՅԻՍ 47.—

ՅԻՍՈՒՍ ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՆԵՐՇԵՂԵ

Դաս Ղուկ. ԺԺ. 4-10

Կարդալ Սաղ. ԺԵ.

Կարելի է ըսել թէ հոս (ինչպէս Ղուկ. Ժ. 30ի մէջ) Երիքով կը ներկայացնէ անիծեալ աշխարհը: «Եւ մոնելով Երիքովի մէջէն կ'անցնէր»: Երիքով անէծքի քաղաքն էր: Աստուծոյ շնորհքին հրաշալի մէկ յայտնութիւնը կը տեսնենք մասնաւոր անէծքի քաղաքին մէջ անէծքի մասնաւոր առարկայ սեպուած, հոգ մեղաւորներուն գլուխը սեպուած մարդուն Զաքէոսի փրկութեան մէջ: «Որդին մարդոյ եկաւ որպէսզի կորսուածը փնտռէ ու փրկէ»:

Զաքէոս կը փափաքէր եւ որոշած էր անպատճառ Յիսուսը տեսնել: Ու երբ յարմար վայրկեանին Յիսուս զայն կանչեց, նա Յիսուսի կոչին պատասխանեց անհատապէս, հրապարակաւ, անմիջապէս, կամովին եւ ուրախութեամբ:

«Ամէն չարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է» (Ա. Տիմ. 2. 10) եւ ընդհանրապէս տեսնուած է թէ ամենէն առողջ ապաշխարութեանց միջոցին՝ մեղաւորին սրտին հետ իր քսակն ալ կը բացուի: Դժբախտաբար այսօր հաւատացեալներէն շատ շատեր՝ արծաթասէր են, առանց յաճախ հարուստ կամ բարեկեցիկ ըլլալու: Աղքատութեան մէջ ալ մարդ շատ դիւրաւ արծաթասէր կրնայ ըլլալ: Զաքէոս իր արծաթսիրութեանէն ալ լիովին ապաշխարեց:

Յիսուս նախ մարդու մը սիրտը մաքրեց արծաթսիրութենէ, եւ յետոյ մաքրեց Աստուծոյ տաճարը նոյն արծաթէն, եւ յետոյ մաքրուած տաճարին մէջ բժշկեց հիւանդներ, ընդունեց մանուկներ, սորվեցուց Աստուծոյ խօսքը եւն:

ՄԱՅԻՍ 24.—

ԱՊԱՐԱՅԻ ԶԱՄԱՐ ՇԻՆԵԼ

Դաս Ղուկ. Ի. 43-47, ԻԱ. 4-9, 34-36

Կարդալ Ա. Տիմ. 2. 41-49

Այս դասին մէջ կեղծաւորութիւնը մասնաւոր տեղ կը գրաւէ Ի. 46, 47, ԻԱ. 4, 8, նոյնիսկ ԻԱ. 34-36ի մէջ ալ հաւատացեալը պարտի փնտռել

ճշմարտութեան կեանքը, վասնզի կարելի է կեղծաւոր հաւատացեալ մը ըլլալ «արթուն» անուն բայց «քնացած» սիրտ ունենալով: Ստորեւ կուտանք թարգմանաբար խիստ շահեկան սերտողութիւն մը կեղծաւորութեան վրայ, խնդրելով որ իւրաքանչիւր ընթերցող անկեղծ անձնաւորութեամբ սերտէ զայն:

Սուրբ Վրքին մէջ կեղծաւորութիւնը նմանցում է.—

1. Արծաթի կղկղանքով ապականած հողէ ամանի Առակ. ԻԶ. 23:
2. Խաբեբայ համբոյրներու Առակ. ԻԷ. 6, Բ. Թագ. ԺԵ. 5, Ի. 9, 10, Ղուկ. ԻԲ. 47, 48:
3. Սարգի ոստայնի Յոբ. Ը. 13, 14:
4. Պրտուն առանց տիգմի եւ կնիւնը առանց շուրի Յոբ. Ը. 11-15:
5. Խմորի Մատթ. ԺԶ. 12, 6, Մարկ. Ը. 15, Գ. 6, Ա. Կոր. Ե. 6-8, Մատթ. ԻԲ. 23, 29, 16-24:
6. Ծեփած գերեզմաններու Մատթ. ԻԳ. 27-34:
7. Անյայտ (վրան խոտ բուսած) գերեզմաններ Ղուկ. ԺԱ. 44:
8. Որոմ (ցրեհին իրենց նմանութեամբ) Մատթ. ԺԳ. 38:
9. Ծեփած պատ Գ. Առաք. ԻԳ. 5:
10. Ոչխարի հանդերձներով յափշտակող զայլեր Մատթ. Ի. 45:
11. Անշուր աղբիւրներ եւ ամպեր Բ. Պետ. Բ. 17, Յուդ. 12:
12. Զարութեան ծածկոց Ա. Թեո. Բ. 5, Ա. Պետ. Բ. 16:

Կեղծաւորութիւնը ինքզինքը կը յայտնէ.—

1. Աղօթքի մէջ Մատթ. 2. 5, ԻԳ. 14, Ովս. Ի. 14:
2. Պաշտամունքի մէջ Եսայ. ԻԺ. 13, Մատթ. ԺԵ. 5-9, Եսայ. ԾԸ. 2, Մաղ. Ա. 7, 8, Սաղ. Ծ. 16-20:
3. Ծոմապահութեան մէջ Զաք. Ի. 5, Եսայ. ԾԸ. 2-5, Գ. Թագ. ԻԱ. 9, 12:
4. Ինքզինք հաւատացեալ ձեւացնելով Եսայ. ԽԸ. 2, Ղուկ. Ի. 20, Երեմ. Ի. 4, Մատթ. Ի. 22, 23, ԻԳ. 3, Հոով. Բ. 17-24, Տիմ. Ա. 16:
5. Հնազանդութիւն կեղծելով Երեմ. ԽԲ. 20, Մատթ. ԻԳ. 3:
6. Աւետարանը քարոզելով Փիլ. Ա. 15-18, Բ. Կոր. ԺԱ. 13-15:
7. Ողորմութիւն տալով Մատթ. 2. 1-4, Մարկ. Ի. 11:
8. Բարեկամութիւն կեղծելով Սաղ. ԾԵ. 12-14, 21, Առակ. ԻԳ. 6, 7, Ղուկ. ԻԲ. 47, 48:

կեղծաւորութիւնը եւ անոր անտուրբ դաշնաւորները.—

1. Սուտը Ա. Տիմ. Դ. 2, Սաղ. ԺԲ. 2, Առակ. Ժ. 18:

2. Շողոքորթութիւն Սաղ. ԺԲ. 2, 3, Բ. Թագ. ԺԵ. 1-6, Ի. 9, 10, Առակ. ԻԷ. 14:

3. Արձաթախութիւն Մատթ. ԻԳ. 14, Եղեկ. ԼԳ. 31, Բ. Պետ. Բ. 3, Ա. Թեա. Բ. 5:

4. Հպարտութիւն և անձնարդարութիւն Եսայ. ԿԵ. 5, Մատթ. ԻԳ. 3-7, Գ. 9:

5. Ծածուկ նենգութիւն Երեմ. ԽԲ. 20, Սաղ. ՀԸ. 36:

6. Քննադատութիւն Մատթ. Է. 3-8, Ղուկ. ԺԳ. 14, 15:

7. Մոլորկը քամել եւ ուզողը կլլել Մատթ. ԻԳ. 23, 24:

Ուշագրաւ Սուրբ Գրային օրինակներ կեղծաւորութեան.—

1. Յովսէփի եղբայրները Ծննդ. ԼԷ. 35.

2. Աբիսողոմ Բ. Թագ. ԺԵ. 7, 8, 2-6:

3. Յեզաբէլի ծոմապահութիւնը Դ. Թագ. ԻԱ. 9-14:

4. Սաւուղի առաջարկը Դաւիթի Ա. Թագ. ԺԸ. 17-20:

5. Յէուի կեղծ նախանձաւորութիւնը Տէրոջը համար Դ. Թագ. Ժ. 16:

6. Համանի կեղծ պատուախնդրութիւնը Եսթ. Դ. 8:

7. Փարիսեցիները Մատթ. ԺԶ. 1-3, Ղուկ. ԺԲ. 1, Մատթ. ԻԳ. Այս զլխուն մէջ Յիսուս եօթը անգամ փարիսեցիները կեղծաւորներ կը կոչէ:

8. Հերովդէսեանները Մատթ. ԻԲ. 16-18:

9. Յուդա Իսկարիօտացի, մատնիչ Ղուկ. ԻԲ. 47, 48:

10. Քրիստոսը մեռցնել ուզող հրեաները Յովհ. ԺԺ. 7, 14-21, Դ. Առաք. Բ. 22, 23, Գ. 13-15:

11. Անանիա եւ Սափիրա Դ. Առաք. Ե. 1-8:

12. Սիմոն մոզ Դ. Առաք. Ը. 13-23:

13. Ծպտեալ կրօնաւորներ, Սուրբ Գիրքը կը յիշէ, ա) Սուտ եղբայրներ Բ. Կոր. ԺԱ. 26: բ) Սուտ առաքեալներ Բ. Կոր. ԺԱ. 13: գ) Սուտ վարդապետներ Բ. Պետ. Բ. 1: դ) Սուտ մարդարէներ Մատթ. Է. 15, Ա. Յովհ. Դ. 1-4:

Փորձեցէք ձեր անձերը... քննեցէք ձեր անձերը Բ. Կոր. ԺԳ. 5:

ՄԱՅԻՍ 31.—

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻԲԸ

Դաս Ղուկ. ԻԲ. 7-23

Կարգաւ Ա. Կոր. ԺԱ. 23-29:

Չորս Աւետարանիչներն ալ վերջին ընթրիքէն անմիջապէս առաջ կը դնեն Սատանայի Յուդայի սրտին մէջ մտնելը իր վարդապետը մատնելու համար: Եւ տարիներ յետոյ երբ առաքեալը Տէրոջը ընթրիքը կը յիշէ, այսպէս կարտայայտուի, «Տէր Յիսուս իր մատնուած գիշերը...» (Ա. Կոր. ԺԱ. 23): Սատանիչին ամբողջ բաժինը այս եղաւ յիշատակելի գիշերէն. վասնզի «անիկա պատառը առածին պէս շուտ մը դուրս ելաւ, ու գիշեր էր» (Յովհ. ԺԳ. 30): Եւ Յիսուս «ընթրիքէն ետեւ» (Ղուկ. ԻԲ. 20) հաստատեց նոր ուխտի ընթրիքը: Մատնողը ներկայ էր հրէական Զատիկի ընթրիքին (Յովհ. ԺԳ. 26-30, Մատթ. ԻԶ. 21-25):

Այնպէս կ'երեւի թէ Յիսուս իր աշակերտաց հետ հրէական Զատիկի ընթրիքը սովորականէն մէկ օր առաջ կերաւ, (Հինգշաբթի երեկոյ), որպէսզի ճիշդ Զատիկուայ Գառը ուտուելիք իրիկունը (Ուրբաթ երեկոյ Յովհ. ԺԸ. 28) Իսքը Յիսուս ըլլար խաչին վրայ մորթուած Գառը, «Աստուծոյ Գառը», որուն «մարմինը ճշմարիտ կերակուր եւ արիւնը ճշմարիտ ըմպելիք պիտի ըլլար աշխարհի կեանքին համար» (Յովհ. Ա. 29, Զ. 52, 56):

Կարգ մը կէտերու մէջ նոր ուխտի ընթրիքը հրէական Զատիկի ընթրիքին կը նմանի. որովհետեւ երկուքն ալ փոխանորդական Զոհի մը միջոցով փրկութիւն կը յիշեցնեն: (Ելից ԺԲ) Իսրայէլացիք՝ արիւնով ծածկուած (Ելից ԺԲ. 7), խորոված զառնուկին միսը ուտելով իրենց ընելիք ճամբորդութեան համար զօրութիւն ստացան (Հ. 8-11) եւ անոնք որ Յիսուս Քրիստոսի արիւնովը կը փրկուին, (ծախու կ'առնուին Եփս. Ա. 7, Կոր. Ա. 14, Ա. Պետ. Ա. 18, 19) Իսրայէլացւոց նման՝ զօրութիւն կ'ստանան (հաւատքով) «Աստուծոյ Գառին մարմինը ուտելով եւ արիւնը խմելով» (Յովհ. Զ. 53-56) որոնց տեղ հացը ու զինին իբր խորհրդանշաններ են: Տէրոջը ընթրիքը Տէրը եւ Անոր մահը շարունակաբար յիշեցնող հաստատութիւն մըն է (Ղուկ. ԻԲ. 19, Ա. Կոր. ԺԱ. 24-26): Անիկա նաեւ «հաղորդութեան» ընթրիք մըն է որուն բոլոր մասնակցողները Քրիստոսի վրայ իրենց հաւատքին եւ սիրոյն մէջ միացած՝ իրարու հետ հաղորդութիւն ունին և միասնաբար (հաւատքով) իրենց փառաւորեալ Տէրոջը հետ (Ա. Կոր. Ժ. 16): Մանանան (Ելից ԺԶ. 4, 5, 14-31) «Երկինքէն իջած հացին» օրինակը (Յովհ. Զ. 31-33) մեզի կը թելադրէ՝ Անոր հետ յաճախ իր ղեղանին վրայ հանդիպելու պէտքը (Ա. Կոր. Ժ. 21) որպէսզի «մեր հոգիներուն

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒՏՈՒՄ

Ուէսլի թէեւ 30 տարիէ աւելի տեւող արթնութեան հսկայ շարժման մը առաջնորդը եղաւ, բայց երբեք իր գլուխը չկորսնցուց նեղմտութեամբ, վարդապետական երկրորդական կէտերու վէճերով՝ եւ մանաւանդ նա մինչեւ վերջը մնաց իր Վարդապետին նման «մեղաւորներու բարեկամ: Անոր պատգամը նոյնչափ եւ աւելի եղած է հաւատացեալներէն «սրբութիւն» որչափ մեղաւորներուն փրկութիւն: Բայց ոչ մէկ ուտին նա այս երկու պատգամները իրարմէ չգատեց: Անոր համար մեղաւորը կը փրկուէր Աստուծոյ սուրբը դառնալու համար, եւ փրկուած մեղաւորը կը սրբուէր իր կարգին ուրիշ մեղաւորներու փրկութեան միջոց դառնալու համար:

Ուէսլի ապրեցաւ միեւնոյն ատեն իբր բնական մարդ: Նա գիտէր ամէն բանին իր տեղը տալ՝ ու կրնար երկու քարոզներու միջեւ զբաղիլ քաղաքականութեամբ կամ գիտական ընթերցմամբ, գեղարուեստով կամ երաժշտութեամբ, բնութեան զմայլելիքներով, բարեգործութեամբ կամ մանուկներով (անոնց թէ՛ հոգեւոր եւ թէ՛ կրթական զարգացմամբ, նոյնիսկ դասագիրքեր գրելով մաթեմատիքի, աշխարհագրութեան, բնագիտութեան կամ պատմութեան վերաբերեալ): Նա ապրեցաւ 20 տարիներ ամենէն զժբաղղ ընտանեկան կեանքը կնոջ մը հետ որ երբեք չհասկցաւ զինք ու զայն չարչարեց ամէն կերպով:

Այսու ամենայնիւ Ուէսլի մնաց միշտ արթնութեան մարդը, արթնութեան կրակը չմարե-

մէջ հաւատքով Անկէ կերակրուելով՝ կեանքի ճամբորդութեան եւ պատերազմին յարմարցուինք: Մենք ոչ միայն դէպի խաչ հաւատքով երախտագիտական եւ յիշողական նայուածքը պէտք է ունենանք (Ղուկ. ԻԲ. 19, 20) հապա նաեւ Անոր երկրորդ գալստեան երջանիկ յոյսին ուրախ ափնկալութեանը դէպի յառաջ եղած նայուածքն ալ (Ա. Կոր. ԺԱ. 26):

Վ. Ս.

ցաւ անոր սրտին մէջ, հապա ալ առելի բորբոքեցաւ:

Ստորեւ կուտանք քաղուածներ օրագրութեանէն ցուցնելու համար անոր այս հաւասարակշիռ ծրագրով, հաւասարակշիռ մտքով ու կամքով ու (ըսենք նաեւ) հաւասարակշիռ հատուքով կեանքը եւ գործունէութիւնը:

Ուէսլի եւ մանուկները: 44 Ապրիլ. — Որոշած էինք շաբաթը ժամ մը մէկդի դնել մեր 4 դպրոցներուն մանուկները տեսնելու: Շատ շուտ նշմարեցինք այս տեսակցութիւններուն մանկանց վրայ ձգած ազդեցութիւնը, զոր ոմանց մօտ խորունկ եւ տեւական կ'երեւին: Այս օրերս ժամանակ ունեցայ վերջացնելու «Խրատներ մանկանց» անունով գիրքը: ...Սկսայ գրել կարճ «Ծրանսերէն քերականութիւն» մը: ...Թրատն փողոցը զացի եւ շաբթուան մնացած մասը հոն անցուցի իմ ժամանակա տալով աղօթքի, ընթերցումի, խօսակցութեան եւ կամ «Եբրայեցերէն քերականութիւն» մը եւ «Դասեր մանկանց համար» գիրքերը գրելով: ...Հոս ունինք հարիւրի չափ տղոց մէ եւ աղջիկներէ կազմուած իրգլախումբ մը: Անկարելի է անոնց նմանը գտնել ուրիշ մասուորի, մայր եկեղեցւոյ կամ նուագահանդէսներու մէջ: Միայն հրեշտակաց երգը, մեր երկնաւոր Հօրը բնակարանին մէջ՝ կրնայ զայս գերազանցել: ...Կէսօրէն յետոյ Պօլթօնի մէջ մեր կիրակնօրեայ դպրոցի 1000ի մօտ աշակերտները միացուցի: Երբեք ասոր նման տեսարան մը չեմ տեսած: Ոչ միայն անոնց արտաքին երեւոյթը, մաքրութիւնը եւ երգեցողութիւնը զբաղիչ է՝ հապա աւելին կար: Անոնցմէ շատեր Աստուծոյ վախին մէջ կը մեծնան եւ փրկութեան ուրախութիւնը ունին: Անոնք օրինակ մըն են բոլոր քաղաքին: Անոնց սովորական ժամանցն է աղքատ հիւանդները այցելել, զանոնք մխիթարել եւ անոնց հետ աղօթել: Յաճախ անոնցմէ 10, 20, 30 կամ 40 հատը մէկտեղ կուգան երգելու եւ աղօթելու այնքան եռանդով որ դժուարաւ եւ ցաւով կը բաժնուին իրարմէ:

Ուէսլի եւ աղքատները: «Քանի մը տարիներէ ի վեր կը շարունակենք աղքատ հիւանդներու ձրի դեղեր ցրուելու գործը տնտեսներու ձեռքով: Փառք Աստուծոյ՝ այս գործը շատ մը հիւանդներու բժշկութեան միջոց եղած է: ...Մեր տնտեսներուն թիւը 16էն 7ի իջեցուցի եւ անոնց հետեւալ խրատները տուի:—

1. Սուրբ Հոգիով եւ իմաստութիւնով լեցուցէք որպէսզի ամէն բան Աստուծոյ արժանի կերպով ընէք:

10. Ձեր բոլոր խօսակցութեանց մէջ հանդարտ եղէք. կրակէ փախչելու նման փախէք ամէն վէճէ, ամէն վիճաբանութենէ: Լսելու մէջ շուտ եղէք եւ խօսելու մէջ ծանր: Ձեզմէ ամէն մէկը իր եղբայրը իր անձին պէս թող սեպէ:

1. Եթէ չկրնաք աղքատաց թշուառութիւնը թեթեցնել՝ գանոնք մի վիրաւորէք: Եթէ ուրիշ ոչինչ կրնաք տալ անոնց՝ գոնէ սիրալիր խօսքեր տուէք: Վիրաւորիչ նայուածքներէ եւ ծանր խօսքերէ զգուշացէք: Թող անոնք ձեր քով ուրախութեամբ գտնուին իսկ եթէ ստիպուած են պարտապահութեամբ: Ինքզինքնիդ իւրաքանչիւր աղքատի տեղը դէք եւ այնպէս վարուեցէք անոնց հետ ինչպէս պիտի ուզէիք որ Աստուած ձեզի հետ վարուէր:

«Այսօր կարելի եղածին չափ շատ հիւանդներ այցելեցի: Որքա՛ն նախընտրելի է թէ՛ աղքատաց համար եւ թէ՛ մեզի համար երբ կարելիութիւնը կայ աղքատաց նպաստը անձամբ տանիլ քան թէ ուրիշի ձեռքով դրկել»...

Ուէսլի եւ գրականութիւնը: «Ամառան վերջին մասը անցուցի «Քրիստոնէական գրադարանին» վերջին գրքերը պատրաստելով: Այս գրադարանը 200 գրքեր գրել տուաւ ինձ: Անկասկած նոր սերունդը պիտի գիտնայ գանոնք գնահատել: «Փրանքլինի նամակներ» կարդալով՝ սորվեցայ շատ մը բաներ ելեքտրականութեան վրայով եւ յետոյ դրեցի «Ելեքտրականութեան» վրայ ճառ մը»:

Ուէսլիի օրագրութեան մէջ շատ էջեր կան ուր նա կը յիշէ իր ամէն ճիշդ նիւթերու վրայ կարդացած գիրքերը եւ անոնցմէ իր առած տպաւորութիւնները:

Ուէսլի կը սիրէր նաեւ գեղարուեստը եւ երաժշտութիւնը՝ եւ երբ որ կարենար՝ կ'երթար մտիկ ընել հռչակաւոր երաժիշտներու դասական կտորները, եւ իր գնահատական կարծիքները կ'արձանագրէր իր օրագրութեան մէջ:

Ահա թէ ինչպէս բնութեան հմայքները կը գրաւէին Ուէսլին. — «Ժամը Տօ-կրիստի մէջ քարոզեցի: Ամէն ինչ կարծես աղօթքի այս ժամուն հրապոյրը կ'աւելցնէր: Արեւը որ դանդաղօրէն մարը կը մտնէր, երեկոյեան հանդարտութիւնը, մարգագետիններուն եւ դաշտերուն գեղեցկութիւնը որոնց մէջէն վճիռ գետակը կը քալէր իր մեղմ եւ մանուածապատ ծփանքները կազմելով. մեր դիմացի բլրակներուն եւ անտառներուն գեղեցիկ տեսարանը՝ մեր գտնուած բլուրին գազաթը՝ ժողովուած ունկնդիրներուն եռանդը կ'աւելցնէր...: Եւ ասոնց ամենէն վեր՝ երկինքէն

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՄԷՋ

Քրիստոնէական վկայութեան համար երեք գործնական ասպարէզներ կան. ընտանիքը, եկեղեցին, աշխարհը: Մենք բնականօրէն է որ նկատի պիտի առնենք:

Երբ կը մագլցինք բարձր լեռները, ուրկէ մեր գետերը ծնունդ կ'առնեն, ամէն տեղ բազմաթիւ պզտիկ ջուրերու վազքին կը հանդիպինք: Անոնք

իջնող աստուածային լոյսը եւ Ամենասուրբի մը-խիթարութիւնները:

Ուէսլի եւ քաղաքականութիւնը: «Լորտերո՛ւ դահլիճին կից եղող հանդերձարանին մէջ կը գտնուէի, երբ թագաւորը իր պաշտօնական զգեստը հագաւ: Անոր ճակատը տարիքէն կնճիռներ կապած էր եւ հոգերէն մթապնած: Ա՛յս է ամէն ինչ որ աշխարհը կրնայ տալ թագաւորի մը. Ա՛յս է անոր տալիք բոլոր փառքը: Հերմենի վերարկու մը անոր ուսերուն վրայ, այնքան ծանր եւ նեղիչ, որուն տակ դժուարաւ կը շարժէր: Կեղծամիտերու դէպ մը, քանի մը սակեթիթեղներ եւ զլխուն վրայ քանի մը ծանրազին քարեր: Մարզկային մեծութիւնը ի՛նչ ունայնութիւն է:

Քանի մը էջեր աւելցուցի իմ գրքոյկին «Խաղաղ կոչ մը մեր Ամերիկեան գաղութներուն»: Եթէ մէկը հարցնէ, «Ինչո՞ւ այս կոչը գրեցի», թող նա իր շուրջը դիտէ. Անգլիա հրդեհի մը մէջ է. ատելութեան եւ կատաղութեան հրդեհ մը թագաւորին դէմ եւ բոլոր իշխանաւորներուն դէմ: Ես կը ջանամ այս հրդեհը մարել. Այս չէ՞ ամէն ճշմարիտ ազգասէրի պարտականութիւնը:

Բայց ամէն տեղ եւ ամէն կէտի մէջ Ուէսլի Աւետարանին քարոզութիւնը երբեք չզոհեց կեանքի ուրիշ պահանջներուն»: «Քարոզելը իմ կեանքս է» կ'ըսէր: ...«Ձի հեծած Քինկզվուտ կ'երթայի. ճամբան ձիս ինկաւ եւ ջանալով ոտք ելլել՝ կրկին վրաս ինկաւ: Դրացի տունէ մը քանի մը կիներ դուրս ելան եւ ինձ օգնելով ներս տարին: Որքա՛ն պաշտելի է Աստուծոյ իմաստութիւնը: Այն տունին մէջ երեք անձեր գտայ որոնք ասին մը Տէրոջը համար եռանդով լեցուած էին՝ բայց Սատանայէն հրապուրուելով ինկած էին: Անոնք որոշեցին իրենց առաջին հաւատքին վրայ ետ գալ, եւ այն օրէն ի վեր, անոնցմէ ոչ մէկը իր խոստումը չդրժեց: Վ. Ս.



ՊԱՏԱՆԵԱՅ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ

ՎՐԻԺԱՌՈՒԹԻՒՆԸ

Ծերունի ձկնորս մը, խուրձ մը փայտ կոնակը առած, տերեւաթափ անտառէն կը վերադառնար, ցուրտէն զրկթէ կիսամեռ վիճակի մէջ: Ան տաժաւքով կը քաշքշէր իր քայլերը եւ անտառապահին տանը առջեւէն անցնող ճամբան բռնելով կը պատրաստուէր կամուրջը անցնիլ, երբ յանկարծ անտառապահը դուրս ելաւ եւ զօրաւոր ձայնով մը պօռաց,

— Կեցիր, ձերունի՛, ուրկէ՞ առիր այդ փայտը, քուկդ չէ ատիկա, գողցած ես:

Ծեր ձկնորսը զարմացած կակազեց,

— Զեմ գողցած:

Բայց պահապանը ըսաւ անոր,

— Սուտ մի խօսիր. ձերունի, երէկ ես կարեցի այդ փայտը եւ հոն ձգեցի, դուն անկէ առած ես, խոստովանէ:

— Ո՛չ, պատասխանեց ձկնորսը, ես գողութիւն չըրի. այլ ճիւղ առ ճիւղ հաւաքեցի անտառին մէջէն:

Եւ որդիներուն: Այս տարրերէն մէկը, ինքը միտակը բաւական չէ ընելու ընտանիքի այն, ինչ որ պէտք է ըլլայ ան աստուածային ծրագրին համեմատ. եւ նոյնպէս ալ բաւական է որ այս տարրերէն մէկը թերանայ իր սիրոյ պարտականութեան մէջ ու անա ներգաշնակութիւնը աւրուած է: Ընտանիքը Աստուծոյ գործն է ըսինք եւ Աստուծոյ գործերը նշանակալից են իրենց ալ լազանութեամբ եւ իրենց ներգաշնակութեամբ: Տիպար ընտանիքը կրնանք նմանցնել երգչախումբի մը զանազան ձայներուն, որոնց ներդաշնակ բաղակցութիւնը հաճելի է ականջին: Միակ ձայն մը երգչախումբ չկրնար ըլլալ եւ եթէ մէկը միայն սխալ երգէ, ամբողջ ներգաշնակութիւնը կ'աւրուի: Այլը իր բաժինը ունի որ միտակ ինք կրնայ կատարել. կինը՝ իրենը ունի որ միտակ ինք կրնայ կատարել, նոյնն է նաեւ զաւակներուն համար:

(Շար.)

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՆՍՅԱՆ

Սէնթ Էթիէն

Սակայն պահապանը չուզեց համոզուիլ եւ փայտին խուրձը ձերունիին կոնակէն քաշելով կամուրջին վրայէն գետը նետեց:

— Վէճը դադրեցաւ, ըսաւ ան, եւ ծաղրելով տուն վերադարձաւ:

Ձկնորսը տխրութեամբ նայեցաւ անոր եւ աչքերը արցունքով լեցուն՝ քաշուեցաւ գնաց:

Մի քանի օր վերջ օդը մեղմացաւ, գետը սոսկալի կերպով յորդեց եւ սառույցները դիզուեցան կամուրջի կամարներուն առջեւ:

Այդ վայրկեանին անտառապահին տղան Ֆրէտերիք եկաւ եւ կ'ուզէր կամուրջէն անցնիլ, բայց վտանգը նշմարելով վարանեցաւ եւ վախցած ետ քաշուեցաւ:

Ծերունի ձկնորսը որ մօտը կը գտնուէր, իր մակոյկովը զբաղած, անոր խորհուրդ տուաւ կեանքը չվտանգել: Պահապանը զայս տեսնելով իր տղուն պօռաց,

— Անմիջապէս անցիր գետը, կամուրջը չի փլի: Աստուած գիտէ թէ ձեր կոռազանը ո՛ւր կ'ուզէ հասցնել քեզ, գնա տուն:

Ֆրէտերիք վազեց: Բայց այդ նոյն վայրկեանին ահագին սառույցի կտորները զարնուեցան կամուրջին, որ սկսաւ ճարճատիւ եւ փլչիլ տանելով իր հետ նաեւ տղան:

Տղուն հայրը այդ ահռելի տեսարանին առջև շուարեցաւ եւ զայրացաւ: Անդին պատանին անյուսօքէն կ'աղաղակէր եւ օգնութիւն կը խնդրէր: Գերանի մը կառչած եւ մարմինը արդէն սառույցներուն տակ, կիսովին ան կը քշուէր հոսանքէն,

Հայրը անմխիթար կը վազէր եղբիքն ի վար: Ոտքերը գետին կը զարնէր, կը պօռար եւ ձեռքերը կը ճմռթկէր: Ինչպէ՞ս կրնար ականալել որ խեղճ ձկնորսը, զոր վիրաւորած եւ նախատած էր, ազատէ իր դժբաղդ զաւակը:

Բայց ձկնորսը հակառակ իր ճերմակ մտքերուն, իր մակոյկին մէջ նետուած էր: Ան ճարպիկութեամբ թիավարեց սառույցներուն եւ գերաններուն մէջէն եւ տղան բռնելով ապահով ցամաք բերաւ:

— Զաւակդ քեզի կը վերադարձնեմ: Ողջ առողջ է, միայն քիչ մը վախցած է, ըսաւ ան խաղաղ կերպով:


Պահապանը չէր համարձակեր աչքերը վերցնել, ան երկար ատեն այդպէս մնաց, առանց բերանը բանալու:

— Ներէ ինձի, պատուաւոր ձերունի, բացազանչեց ան վերջապէս յուզուած, արցունքի կայլակներ հոսեցնելով երեսն ի վար, ներէ ինձի քեզի հանդէպ ցոյց տուած կոպիտ վերաբերմունքիս համար:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱՅ ԵՐԳԸ

ՅԱԻԻՏԵԱՆ

Քեզ յաւիտենական սիրով սիրեցի Երեմ. ԼԱ. 3



1.— Տէր Յիսուս ինձ համար
Ո՛հ, խաչուեցաւ,
Չարչարուեցաւ
Ինք սիրեց զիս, սիրեց
Յաւիտեան:

2.— Բոլոր մեղքերս ներեց,
Մեղքերս ներեց,
Մեղքերս ներեց,
Զիս իր արեամբ սրբեց
Յաւիտեան:

4.— Սըրտիս մէջ խընդութեան
Ո՛հ, խընդութեան,
Խաղաղութեան
Սուրբ գիտեր կը հոսին
Յաւիտեան:

6.— Հոն՝ ուր ա՛լ մեղք չըկայ
Ա՛լ ցաւ չըկայ,
Արցունք չըկայ,
Ժըպիտ, լոյս եւ սէր կայ
Յաւիտեան:

3.— Ո՛հ, ես ալ փրկուած եմ,
Ա՛լ փրկուած եմ,
Ա՛լ փրկուած եմ
Խաչեալ Փրկչիս ձեռքով
Յաւիտեան:

5.— Շատ չանցած պիտ մեկնիմ
Ո՛հ Հայրենիք,
Տունս է երկիրք,
Փրկչիս հետ ապրելու
Յաւիտեան:

7.— Փա՛ռք, փառք Տէր Յիսուսի,
Փառք Յիսուսի,
Փառք Յիսուսի,
Փառք Անոր այժմ եւ միշտ
Յաւիտեան:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

— Ներելիք ի՞նչ ունիմ քեզի, պատասխանեց
ձեր ձկնորսը, միթէ վրէժս բաւականաչափ չլու-
ծեցի՞ արդէն:

— Ուրեմն դուն բարիք ընելով վրէժ կ'առնես,
ըսաւ պահապանը: Պատուաւոր մարդ մը այս
կերպով է որ վրէժ կը լուծէ:

— Վէճը դադրեցաւ ըսաւ ձերուներն եւ հան-
դարտօրէն քաշուեցաւ իր գործին պարապելու:

Այս ձկնորսը հասկեցած էր այն խօսքը զոր
Քրիստոս իր աշակերտներուն ըսած էր, «Սիրե-
ցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծող-
ները, բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն»:

Սիրելի զաւակներ, միայն ձերերու եւ մեծե-
րու գործ չէ սիրել իրենց թշնամիները, հապա
նաեւ պզտիկներուն ալ եւ ձերն ալ: Բայց կը
խորհի՞ք թէ դուք անձամբ պիտի կրնաք բարիք
ընել ձեզ առողջներուն: Ո՛չ, մարդուն սիրտը չար
է եւ չարը առեւտրութեան դէմ կրկին առեւտ-
րութեամբ կը կենայ, բայց փոխուած սրտի մը հա-
մար միայն կարելի է այս բանը: Ուստի եթէ

այսպիսի գեղեցիկ բան մը ընել կ'ուզես քեզի
սիրելի չեղող եւ զքեզ չսիրող անձի մը, նախ
սիրող Տէր Յիսուսի յանձնէ, Անիկա քեզի այդ
կարելիութիւնը պիտի տայ եւ զքեզ ալ հերոս
մը պիտի ընէ: Անոնք որ զիրենք առողջներուն
բարիք կրնան ընել Յիսուսի սիրովը, հերոսներ
են: Յովսէփ հերոս մըն էր, Յիսուսի սիրովը նե-
րեց իրեն չարիք ընող եւ իր ձեռքը ինկող իր
եղբայրներուն: Դուն ալ կրնաս Յովսէփի պէս
սուրբ պատանի մը եւ երիտասարդ մը ըլլալ:

Յ. Ք.

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St. - Saviour Marseille

ՀԱՅ ԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարաժամիչի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՅԼ—Հովիտ' (Վեր.) Յ. Ն. Ղազարոսեան
7 Rue Papère.

8 30 կիր. դաս մեծերու 2 r. Philippe de Giraid
15 30ին աղօթածողով, " »

կիր. ժամը 13 45ին քարոզածողով, " »
մանկանց համար

կիր. դասեր ժամը 9. 30ին քաղաքին մէջ

Սէնժուլիէն եկեղեցոյ աղօթատեղին մէջ

Լէզ Օլիւ Սէն ժէրոմ, Ս. Միք. Ալբ. Պոլ

Վար Օտո մանկաւոր ընակարաններու մէջ:

Շարաժամիչի ժողովներ

Բ. շր. ժամը 2ին Սէնժ Անժուան,

Դ. շր. ժամը 2ին Սէն ժիւլիէն եւ Լէզ Օլիւ

Դ. շր. 19 30ին քաղաքը 11, Rue de l'Eclipse

Ե. շր. ժամը 20ին Սէն ժէրոմ

Ռ. շր. ժամը 20ին Camp Victor Hugo

ՍԷՆ ԼՈՒ.—Քարոզիչ Պատ. Վահան Սահակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon, St. Loup

կիր. ժամը 8 30ին մանկանց կիր. դաս:

10. 30ին Ս. գրական ուսումնա

15 30 ին քարոզածողով:

ՍԷՆՑ ՄԱՐԿՐԻԹ.—

կիր. ժամը 14ին քարոզածողով:

ԼԱ ՍԻՍԹԱ.—Քարոզիչ' Պատ. Ս. Պազգալեան
24 Rue Fougasse

կիր. ժամը 9. 30 ին աղօթածողով

Ֆրանս. եկեղեցին մէջ

15 ին քարոզածողով,

մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

.....

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիտ' Վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

կիր. ժամը 8. 30 մանկանց կիրակ. դաս

10. 15 քարոզածողով

18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷՐ.—

կիր. ժամը 10ին մանկանց կիր. դպրոց:

16. 30 ին քարոզածողով եւ

աղօթածողով

ՄՕՆԹԵԼԻՄԱՐ.—

կիր. ժամը 13ին մանկանց կիր. դպրոց

14ին քարոզ եւ աղօթածողով:

.....

ՎԱԼԱՆՍ.—Հովիտ. Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
55 Ave. Jean Jaurès Bourg les Valence

(Drôme)

կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս

եկեղեցին մէջ

ՌՕՄԱՆ.—

կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիտ' Վեր. Ժ. Պարսումեան,

18, Rue du Dr. Rebatal

կիր. ժամը 9. 45ին քարոզածողով,

5 Cours Lafayette, 8 Passage Coste.

11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդութիւնը:

ժողով (15 օրը անգամ մը):

18 Rue du Dr. Rebatal.

ՏԷՍԻՆ.—

կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,

15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

կիր. ժամը 15ին քարոզածողով

Rue Lafayette.

ՓՕՆ ՏԸ ՇԷՐԻԻ.—

կիր. քարոզածողով եւ աղօթածողով

(15 օրը անգամ մը):

ՍԷՆԹ ԷԹԻԷՆ—Քարոզիչ Պատ. Ի. Արրահամեան
60 Rue Richelandière

կիր ժամը 10. 30ին քարոզածողով

57 Rue de la République

17ին աղօթածողով.

Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

կիր. ժամը 14ին քարոզածողով

Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

.....

ԲԱՐԻՉ—Հովիտ' Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

կիր. ժամը 10 30ին քարոզածողով

11 Rue Jean Bert Ա. Խարկ Met. Rennes

Ամսոյն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Բ. Ը. քա-

նակառնին: Ամսոյն Գ. կիր. ժ. 16ին Օ. Բ. Ը.

37 Rue Tournefort Paris 5 Metro Mouhe

կիր, ժամը 20. 30ին աղօթածողով

ժամը 10ին կիրակնօրեայ դաս

59 Ave. du Bas Meudon Ile St Germain

Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ' Պր. Մ. Վէքիլեան

22ter Rue de Vitry Alfortville

կիր. ժամը 9ին կիր. դպրոց

կիր. ժամը 10ին պաշտամունք

երկու կիր. անգամ մը 7.30ին երկու խառն ժողով

Rue des Brochets, Alfortville

ՅԻՇԱՏԱԿԻ ԳԻՐԲ

Հայ Աւետարանականութեան Դարադարձի Աւթիւ

«Հին օրերը միտքդ բեր, անցած դարերու տարիները մտածէ, քու հօրդ հարցուր, ու թող քեզի պատմէ, քու ձերերուդ հարցուր ու թող քեզի ըսեն» Բ. Օր. ԼԲ. 7: Սաղ. ԿԳ. 3, ԽԸ. 12:

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԹՆՈՒԹԻՒՆ ՄԸ (Renaissance) ծնած էր մեր ազգին ծոցէն, որ յետոյ «Բաքիպաշտական Միաբանութիւն» անունով կազմակերպուիլ հարկադրուեցան, որմէ դար մը անցած է:

Հակառակորդներ «Աւետարանականներ» կոչեցին զանոնք, որովհետեւ Աւետարան կարգադրուեալ մը սկսած էր եւ յաճախ Աւետարանի վերայ կը խօսակցէին:

Այս նորութիւն մըն էր այդ դարուն, հետեւաբար անիմանալի թուեցաւ պահպանողականներուն: Ուստի զայն խափանելու աշխատեցան, ինչ որ սովորութիւն է ամէն յառաջդիմական նոր շարժումի դէմ ելլել: Հետզհետէ խտտացող հալածանքներուն չկրնալով դիմանալ՝ հազարաւորներ լուցին: Սակայն պզտիկ խմբակ մը անդդուելի մնաց իրենց նոր սկսած հոգեւոր յառաջդիմական եռանդին ամէն գնով: Ի վերջոյ ստիպուեցան ուրոյն եկեղեցի ըլլալ «Աւետարանական» անունով, որպէսզի պաշտպանուին Օսմ. Կառավարութենէն ու վայելեն իրենց խղճի ազատութիւնը 1846ին:

ՀԱՐԻԻՐԱՄԵՍԱՅ ԱՒԱՆԴԸ.— «Հիմա միտքդ բեր թէ ինչպէ՞ս ընդունեցիր եւ լսեցիր ու պահէ» Յայտ. Գ. 3:

Ձեզի է ԽՕՄԲԸ, ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՁԵՑԻԻ ԶԱՒԱԿՆԵՐՈՒԻ: Սիրելիներ, սփիւռս աշխարհից բոլոր ներկայ եւ ապագայ սերունդներուն հարկ է եւ խիստ օգտակար գիտակցիլ այդ մեծ Հոգեւոր Արթնութիւնը, ո՛ւր յանգեցաւ մինչեւ մեր օրերը ու անոր կենսունակութիւնը: Որո՞նք եւ ի՞նչ զոհողութիւններով ու քաջագործութիւններով կրցին վեր բռնել այդ Հոգեւոր Վերածնունդի Դրօշը, նաեւ ինչպէ՞ս ռահվիրայ եղան կրթական եւ սահմանադրական մարզերուն:

Ինչ ո՛ւ եւ ինչպէ՞ս պէտք է պահպանել այդ մեր թանկագին ժառանգը, եւ աւանդել զայն ներկայ սկեպտիկ գիտական դարու գաւազներուն, որպէսզի եկեղեցիէն չուժանան եւ կրօնքը սիրեն: Եկեղեցիներու սպառնացող վտանգներ, Յետամընաց բարեկարգութիւններ, Ապագայ ուղեւորի ճշգումներ, Դարուս պահանջին պատշաճեցումներ... ներկայի կարեւոր հարցեր են:

Անցեալը կորուստէն փրկել եւ ապագայի զբաւականը կը ներշնչեն ու կ'ոգեւորեն ներկան:

Այս է մեր փափաքը եւ մեր իտէալը:

Այս խիստ կարեւոր ու կենսական նպատակաւ պատրաստութիւններ ու պրպտումներ կ'ընենք տարիներէ ի վեր: Այս խիստ գծաւորին ձեռնարկը ամբողջացնելու համար անհրաժեշտ պէտք էր մեր հայ եկեղեցականներու եւ մտաւորականներու մասնակցութիւնը ու զորակցութիւնը մեզի հետ ունենալ որ կարելի ըլլար ընդհանուր հաւաքական եզրակացութեան մը յանգիլ: Այս նպատակաւ 3 տարի առաջ մասնաւոր հաւցարան նամակներով դիմեցինք 150ի մօտ հայ բարձրապատիւ եկեղեցականներու եւ մտաւորականներու, թէ Առաքելական եւ թէ Աւետարանական անխտիր ամենուն ո՛ւր որ կրցինք հասնիլ եղբայրական սիրով,


Մեր խորին շնորհակալութիւնը եւ գոհունակութիւնը կը մատուցանենք այն պատուարման հովիւներուն եւ մտաւորականներուն իրենց զրկած հմտալից պատասխան գրութիւններուն համար, ինչպէս նաեւ իրենց ազնիւ սրտէն բխած գնահատական եւ քաջալերական խօսքերուն, որոնք ընդունեցինք հաբիւրի մօտ, աշխարհիս ամէն կողմը, նոյնպէս անոնց ալ որ ի մօտոյ պիտի զրկեն:

Այդ գոհալի գրութիւնները կ'արժեն հատոր մը ըլլալ առանձին. սակայն անոնք մէկ մասն պիտի կ'ազմեն այդ քաղմակողմանի նիւթերու ուսումնասիրութեամբ ճոխացած հատորին, որուն մէջ պիտի տեսնենք հարիւրամեայ Հայ Աւետարանականութեան պատկերը, անոր կից ալ պօմ մը մեր արժանապատիւ նախնեաց եւ նահատակուող ու վերապրող եկեղեցական հայրերուն նկարները, հարիւրաւորները եւ գուցէ հազարաւորները իրենց կենսազրականներով: Մայր եկեղեցիի սրբազան Հայրապետներէ ոմանք իրենց ազամանդեայ խօսքերով զորդարուն:

Եկեղեցական եւ կրթական հոյակապ շէնքերէ ոմանք նաեւ երբեմն հին վանքեր... եկեղեցական կարեւոր նիւթեր եւ հարցեր լուսաբանուած, դարուս արդիւնաւորութեան նոր եւ գործնական մեթոտներ, եւայլն, եւայլն:

Արդ, Ձեզի է ԽՆԴՐԱՆԲԸ, ՀՐԱԻԷՐ ԿՈՁԸ, ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒԻ, ԵՂՎԱՅՐԱԿԱՆ ՈՂԶՈՅՈՎ, ուղարկելով մեզի ԱՆՅԱՊՄԱԼ եկեղեցական կարեւոր գիտելիքներ: Եկեղեցականներու կարեւոր նկարներ, խմբանկարներ (հին ու նոր) 3-6 տողոց կենսազրականով, որով հնարաւորութիւն կը շնորհէք մեզի աւելի գոհացուցիչ ընել երկասիրութիւնս: (Վեր.) Կ. Պ. ԱՏԱՆՍԻԵՍՆ

133 Fort George Ave, New York, N. Y. U.S.A.





Ար. Գրոց Միութիւնը կապակցութիւն ունի շատ եկեղեցիներու, Ար. Գրոց ուսանողներու, դպրոցներու եւ գոլէմներու հետ, եւ մեծերու թէ փոքրերու պոլիտեխնիկոս-տայ մը եղած է Ար. Գիրքը օրէ օր կարգաւ եւ իւրերորդածութեան առարկայ ընելու համար:

Ար. Գրոց Միութեան իւր 6,000 հիւրեր կան Մեծ Բրիտանիոյ մէջ: Եւրոպայի մէջ իւշոր հիւրեր կան — Ճրոնտա, Իտալիա, Ճապոնիոյ, Սքոտլանտի, Հոլանտա, եւլ: Ասիոյ մէջ — Նիդլանտան, Զինստան, Ճապոն, Գորէա: Աւստրալիոյ մէջ — Նոր Հարաւային Ռէյլս, Վիքթորիա, Բաւմանիա, Նոր Զելանտա: Ամերիկայի մէջ — Բանտա, Միսսիսսիպի, Կալիֆորնիա, Պաքիստան, Նիւ Ենք: Ամերիկէի մէջ — Հիւսիսային, Հարաւային, Արեւմտեան, Արեւմտեան եւ Կեդրոնական Ամերիկէ ու բոլոր նոյրքները:

Ար. Գրոց Միութիւնը կը գործէ անհատներու եւ ազգերու լաւագոյն շահերուն համար: Մեծ ծախսութիւն կը մատուցանէ ապագային՝ նորոգում սերունդին դիւրեկալ միջոցներուն վրայ տպաւորելով Ար. Գրոց սկզբնաւորները, որոնցմէ կախաւ է ճշմարիտ յաջողութիւնը:

Ամէն ոք կրնայ անդամակիլ Ար. Գրոց Միութեան, բայց անոնք միայն անդամակցելու են որոնք իրաւէն կը բաղան կանոնադրաւէս ու ազօրքով կարգաւ որոշուած մասերը:

ՍՈՒՐԵ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՆՂԱՄԻ ՔԱՐՏ

ԱՆՂԱՄԻՆ ԱՆՈՒՆԸ

Մասնագիրը

Ընդունում

Աստագրուած

ձեռնարկ
ՊԱՏՈՒԱՆԱԼ
ԳԱՏՈՒՂԱՐԸ

«Մանկութենէն ի վեր Սուրբ Գիրքերը գիտես. որոնք կրնան խնամուիլ ընել քեզ փրկուելու՝ Գրիտոս Յիսուսի վրայ եղած հուստով: Բ ՏԻՐ. Գ. 15:

Գարտադրար Սուրբ Գրոց Միութեան

J. H. HUBBARD

3 & 5 WICMORE ST., LONDON W. 1

1937

ՍՈՒՐԵ ԳՐՈՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ար. Գրոց Միութեան, որ 1879ին կազմուեցաւ, նպատակն է զարկ տալ Ար. Գիրքը կանոնաւ որաւէս ամէն օր կարդալու շարժման:

Որոշուած մեթոտն է Ար. Գիրքը ծայրէ ծայր կարգով հինգ տարուան ընթացքի մը մէջ: Ամէն տարի ամբողջովն կը կարդացուին Աւետարաններուն երկուքը եւ առաջեակներու թուղթերուն երկու երեքը: Ողջափ կարելի է, Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի գիրքերը փոփոխակի կը կարդացուին, Սաղմոսներն ալ մերթ ընդ մերթ միւս գիրքերուն միջեւ: Առօրեայ ընթերցումները միջին հաշուով տասնընչորս համար են եւ մասնաւոր կկուլով կը յարմարին դեռահասներու եւ գործի մարդոց պէտքերուն:

Ար. Գրոց Միութիւնը Ազգերի Միութիւն է միանգամայն: Անդամներն ամէն կիրակի առաւօտ կ'արթին իրարու համար: Ար. Գրոց Միութիւնը տարածուած է ամէն տեղ եւ ունի 850,000 անդամ: Ար. Գրոց տարեկան ընթերցումներուն ցանկը կը հրատարակուի 50 տարեկը լեզուներով:

յ Սիութեան անդամակցելու համար անհրաժեշտ է ձեր անունը դրիկ տեղային բարուրդարի մը, որ մեզի կ'ընթաց անդամակցութեան բարտ մը առօրեայ ընթերցումներու ցանկը պարտաւոր: Այդ քարտերը կը նորոգուին տարուէ տարի:

